ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարության

«ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2023_2028թթ.

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ

ՀԱՎԱԿՆՈՐԴ՝

ՆԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԽՇՈՅԱՆ

*Սույն Զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ Կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2022 թ. սեպտեմբերի 22-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձեվաչափը եվ զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 15-ի n 16-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» No35-Ա հրամանով հաստատված ձեւաչափին եւ պահանջներին համապատասխան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զարգացման ծրագրի կառուցվածքային սխեման

Նախաբան

1. Ուսումնական հաստատության բնութագիրը, գործունեությունը
2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը
3. Նպատակների և խնդիրների սահմանումը
4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը
5. Ուսումնական հաստատության զարգազման ծրագրի կատարման պատասխանատուները
6. Ուսումնական հաստատության զարգազման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները
7. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը
8. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները եվ նյութատեխնիկական պարագաները
9. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը կազմելիս առաջնորդվել եմ Հայաստանի Հանրապետության

- «Սահմանադրություն»
- «Կրթության մասին»
- «Հանրակրթության մասին»
- «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին»
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքներով
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով
- Այլ օրենքներով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը, և որի գլխավոր նպատակն է. գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ և մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը, որն առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին շարունակաբար իրականացվում են կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք միտված են լուծելու կրթության ոլորտում առկա խնդիրները:

Դպրոցի զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ԴԶԾ) արտացոլում է տվյալ դպրոցի զարգացման առնվազն 5 տարվա տեսլականը: Այն սահմանում է կոնկրետ նպատակներ և խնդիրներ, պլանավորում է այն կարևոր գործողություններն ու միջոցառումները, որոնք կնպաստեն սահմանված նպատակների աստիճանական իրականացմանը: ԴԶԾ-ն էապես տարբերվում է դպրոցի աշխատանքային պլանից, քանի որ այստեղ ներկայացված են ոչ թե ընթացիկ խնդիրները, այլ հանդես է գալիս որպես դպրոցի ռազմավարության պլանավորում, որն ուղղված է դեպի ապագան և ունի նորարարական ուղղվածություն:

«Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. Զարգացման ծրագիրը մշակվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական ծրագրի հիմնադրույթներին համապատասխան: Ծրագրի նպատակն է նախանշել Ուսումնական հաստատության հետագա զարգացման ընթացքը և հստակեցնել Ուսումնական հաստատության առջև դրված խնդիրների արդյունավետ լուծմանն ուղղված միջոցառումների շրջանակը՝ ապահովելով դրա իրատեսական և չափելի իրականացումը:

Սույն զարգացման ծրագրի ***նպատակները բխում են.***

- <u>ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով կրթության զարգացմանն ուղղված նպատակներից</u>
- <u>Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրից:</u>

Զարգացման ծրագրի շրջանակը համապատասխանեցված է կրթության ոլորտում ՀՀ պետական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունների հետ՝ արտացոլելով դրանց ներդաշնակ կապը պետական, համայնքային, հանրային և մասնավոր կարիքների, ինչպես նաև համաշխարհային զարգացման միտումների հետ:

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
- Հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ գյուղ Նոր Կեսարիա 14 փողոց, 20 շենք
- էլ. փոստ՝ norkesaria@schools.am

<u>Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները</u>

- ✓ Աշխատողներ՝ 31
- ✓ Կազմակերպա-իրավական տեսակը՝ ՊՈԱԿ
- ✓ Իրավաբանական տեսակը՝ Ոչ առևտրային
- ✓ Տնօրեն՝ Գարան Պապոյան
- ✓ Դպրոցի ստեղծման տարեթիվը՝ 1974 թ.
- ✓ Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ սովորողների ազատ տեղաշարժման համար, պետք է նշեմ, որ տեղ-տեղ ցանկապատը բացակայում է, որի պատճառով գյուղացիների անասուններն անխոչընդոտ մուտք են գործում դպրոցի տարածք: Դա էլ իր հերթին վտանգ է ներկայացնում աշակերտների անվտանգության համար:
- ✓ Տարածքը մեկուսացված է և հեռացված ավտոճանապարհային զոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրի հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից: Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:
- ✓ Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է:
- ✓ Ուսումնական հաստատության շենքը մասնակի վերանորոգված է:
- ✓ Ոսումնական հաստատության կահույքը բարվոք վիճակում չէ:
- ✓ Ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Ուսումնական հաստատության նախասրահում բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաներ՝ համապատասխան գունային ցուցասլաքներով: Տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով: Սակայն շենքը չունի ապաստարան, ինչը ևս խնդիր է:
- ✓ Մուտքերի թիվը՝ 1 գլխավոր(2 դուռ), 1 ետնամուտք(1 երկաթե դուռ)

- ✓ Դպրոցն ունի մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ և աշակերտական խորհուրդ։
- ✓ Թույլատրելի սահմանային տեղեր.

Տարրական՝ 90 սահմանային տեղ

Հիմնական՝ 145 սահմանային տեղ

Ավագ՝ 70 սահմանային տեղ

- ✓ Առկա է միայն մեկ մասնագիտական դասասենյակ՝ տղաներին «Տեխնոլոգիա» դասավանդելու համար
- ✓ Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն, սովորում են ԿԱՊԿՈՒ 7 աշակերտ,

  2 ուսուցչի օգնական, որոնցից մեկը գտնվում է ֆիզարձակուրդում
- ✓ Հոգեբան և հատուկ մանկավարժ տրամադրում է ՏՄԱԿ-ը, չունենք սոց.մանկավարժ
- ✓ Ռեսուրս սենյակ՝ առկա չէ
- ✓ Հեռավար կրթության դեպքում օգտվում են Teams, Zoom հարթակից
- ✓ Հերթական ատեստավորման մասնակից ուսուցիչներ՝ 4,
- ✓ Կամավոր ատեստավորման համար դիմել են երկու ուսուցիչ
- ✓ Ջեռուցման եղանակը՝ լոկալ ջեռուցման ցանց։ Սակայն ջեռուցվում է միայն 1-ին մասնաշենքը, իսկ 2-րդ և 3-րդ մասնաշենքերը միացված չեն ջեռուցման համակարգին
- ✓ Առանձնասենյակներ՝ 1 տնօրենի կաբինետ, 1 ուսուցչանոց, 1 ուսուցչի օգնականի համար նախատեսված։
- ✓ Լաբորատորիա(ներ)՝ 4
- ✓ Առարկայական սենյակ /կաբինետ՝ 1 մոնիտորի սենյակ ՏՀՏ-ի դասավանդման համար
- ✓ Ինտերնետ կապի առկայությունը՝ առկա է, սակայն թույլ է
- ✓ Բացօթյա սպորտհրապարակ՝ 1(անմխիթար վիճակում)
- ✓ Մարզադահլիճ՝ 1(անմխիթար վիճակում)
- ✓ Հանդիսությունների դահլիճ՝ 1(անմխիթար վիճակում)
- ✓ Արհեստանոց՝ առկա չէ
- ✓ Բուժկետ ՝ առկա չէ, անհրաժեշտության դեպքում դիմում ենք տեղի ամբուլատորիա, կա առաջին բուժօգնության պայուսակ, որի պատասխանատուն ԴԱԿ-ն է
- ✓ Ճաշարան՝ 1, առկա է տաք սնունդ նախակրթարանի և մինչև 4-րդ դասարանի աշակերտների համար
- ✓ Հանդերձարան (ներ)՝ առկա չէ
- ✓ Զուգարան (ներ)՝ 3՝ (1՝ ներսում, 1՝ դրսում, 1՝ նախակրթարանում)
- ✓ Տեխնիկական նշանակության այլ սենյակներ՝ 3
- ✓ Համակարգիչներ՝ 6

- ✓ Հեռախոսներ՝ առկա չեն
- ✓ Գրադարան (ներ)՝ 1(անմխիթար վիճակում)
- ✓ Աշխատողների թիվը՝ 31
- ✓ Դասարանների թիվը՝ 12
- ✓ Աշակերտների թիվը 2022-2023 ուստարում՝ տարվա սկզբին ՝ 221, ուստարվա ավարտին՝ 220
- ✓ Մանկավարժական աշխատակազմի բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն:

<u>Ուսումնական հաստատության մարդկային ռեսուրսները</u>

Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը					
	25-29	30-39	40-49	50-59	60 և ավելի
2018-2019	7	7	0	1	4
2019-2020	9	6	0	1	4
2020-2021	8	7	0	1	1
2021-2022	2	14	1	0	2
2022-2023	1	11	2	3	1

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

h/h	Հաստիքային միավորի անվանումը	Հաստիքային միավոր
	ՀՈՒՀ վարչական անձնակազմ	
1	Տնօրեն	1
2	Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ	1
3	Տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	
	Ընդամենը	2
	ՀՈՒՀ Մանկավարժական հաստիքներ	
1	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	1

2	Նախնական զինվորական պատրաստվածության և անվտանգ կենսագործունեության ուսուցիչ	1
3	Նախակրթարանի դաստիարակ	1
	Ընդամենը	3
	ՀՈՒՀ Մանկավարժական աջակցություն մատուցող մանկավարժական հաստիքներ/ներառական/	
	Հատուկ մանկավարժ	1
	Սոցիալական մանկավարժ	
	Հոգեբան	
	Ուսուցչի օգնական	1.5
	Ընդամենը	2.5
1	**ՀՈՒՀ Գլխավոր հաշվապահ**	1
	ՀՈՒՀ Ուսումնաօժանդակ անձնակազմ	
1	Տնտեսության վարիչ	0.5
2	Գործավար	0.5
3	Գրադանավար	0.75
4	Գրադարանի վարիչ	
5	Քաղպաշտպանության շտաբի պետ	0.5
6	Լաբորանտ	
7	Օպերատոր	0.5
8	Բանվոր, էլեկտրիկ, փականագործ, հյուսն	
9	Պահակ	2.25
10	Հավաքարար	1.5
11	Այգեպան	
12	Դռնապան	
13	Հնոցապան, վառարան վառող / 4ամիս,3դրույք/	
	Ընդամենը	6.5
	Ընդամենը հաստիքներ	15.0

Տվյալներ գրադարանային ֆոնդի մասին	
Գրադարանային ֆունդում առկա գրքերի/ բացառությամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագիքերի/ ընդհանուր թիվը	6122
Գեղարվեստական գրքերի թիվը	3869
Տեղեկատվական գրքերի թիվը/բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն	116
Ուսումնամեթոդական գրքերի թիվը	2087
Ամսագրերի թիվը	39
Այլ	11

* Վերջին անգամ գրադարանային ֆոնդի նոր գրականությամբ համալրելու տարեթիվը՝ 03.05.2023թ.

** Գրադարանից միջինում ամսական օգտվողների թիվը՝ 75-80 անձ։

Ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինները

Ուսումնական հաստատության կառավարման գործում ներգրավված են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները, որոնք գործում են օրենսդրությամբ և Ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում.

1. կառավարման խորհուրդ,
2. մանկավարժական խորհուրդ,
3. ծնողական խորհուրդ,
4. աշակերտական խորհուրդ

Դպրոցի կառավարման խորհուրդն ակտիվորեն ներգրավված է Դպրոցի կառավարման հարցում, երաշխավորված է տնօրեն-կառավարման խորհուրդ արդյունավետ համագործակցությունը։ Կառավարման խորհրդի նիստերի շրջանակներում Դպրոցի տնօրենը ներկայացրել, և քննարկվել են.

• ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ բյուջետային տարվա ֆինանսավորման հայտը, հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները,

• ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները,

• Դպրոցի զարգացման ծրագրի կատարողականը:

Հաշվետու ժամանակաշրջանում (2023-2028թթ.) Դպրոցի տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցությունն իրականացվելու է կողմերի վերանայված լիազորությունների շրջանակներում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի շրջանակներում: Նախատեսվում են խորհրդի աջակցությամբ զարգացման ծրագրի կատարումը, Դպրոցի կազմակերպական կառուցվածքի, ներքին կարգապահական, (այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի) կանոնների հաստատումը, ուսումնադաստիարակչական գործունեության (այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման) մասին հաշվետվությունների, ներքին և արտաքին գնահատման արդյունքների քննարկումը:

<u>Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեությունը..</u>

Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեության հիմնական նպատակը սովորողների ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումն ու զարգացումն է սահմանափակ ֆինանսական ռեսուրսների 17 պայմաններում: Այս իմաստով Դպրոցի առջև խնդիր է դրված՝ բարձրացնելու ֆինանսավորման պլանավորման և ծախսման արդյունավետությունը, ծախսային ուղղությունները համապատասխանեցնելու Դպրոցի և սովորողների կրթական կարիքներին: Դպրոցի ֆինանսավորումն իրականացվում է հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության կողմից՝ պետական բյուջեի միջոցներից: Ֆինանսավորման չափը ձևավորվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թվականի սեպտեմբերից կհաշվարկվի դասարանների թվով: Դպրոցին հատկացված ֆինանսական միջոցները ծախսվում են՝ ելնելով Դպրոցի կարիքներից ու հնարավորություններից: Ֆինասատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Դպրոցի բյուջեի ծախսման հիմնական ուղղությունն աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների կատեգորիան է: Դպրոցի առկա ֆինանսական խնայողությունը հնարավորություն է տվել 2022թ. ընթացքում կոսմետիկ վերանորոգել Դպրոցի 4 դասասենյակ:

Դպրոցի առաքելությունը

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Հանրակրթություն անհատի, հասարակության և պետությանշահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի՝ սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը»:

Այսօր անկախ Հայաստանում ազգային բովանդակությամբ կրթություն է իրականացվում, և դպրոցն է որոշում կրթության ազգային բովանդակությունը: Դպրոցը, որպես կրթության հիմնական և ամենաերկար փուլը, կրթության որակի ապահովման առանցքային գործոնն է, որից կախված է յուրաքանչյուր անձի ինչպես նաև հասարակության հետագա կյանքի հաջողությունը:

Ժամանակակից դպրոցի մոդելը պետք է համապատասխանի տնտեսության և սոցիալական ոլորտի նորարարական զարգացման առաջատար նպատակներին, ապահովի երկրի բարեկեցության աճը և նպաստի մարդկային ներուժի ձևավորմանը:

Մեր զարգացման ծրագիրը սահմանում է դպրոցի մի նոր գլխավոր նպատակ, այն է՝ կրթության դերի արժևորում, դպրոցի վարկանիշի բարձրացում,մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը:

Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝

- Փորձառու մանկավարժական համերաշխ կոլեկտիվը
- Համագործակցային աշխատանքը
- Համընդհանուր ներառական կրթության իրականացումը
- ՈՒսուցման արդյունավետ կազմակերպումը
- Կրթության որակի բարելավմանը միտված շարունակական, միջոցառումները՝ սեմինարներ, ժողովներ,բանավեճեր, վեբինարներ, վերապատրաստումներ
- Կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը
- Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում
- Առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակակյան բարելավում

- Մանկավարժական համակազմի համալրում նոր փորձառու կադրերով
- Համակարգչային տեխնիկայի համալրում
- ժամանակակից սարքերի և սարքավորումների ձեռքբերում
- Էլեկտրոնային կրթական ռեսուրսների շարունակական համալրում և դասապրոցեսում վերջիններիս կիրառման ընդլայնում
- Լրացուցիչ վճարովի ծառայությունների կազմակերպում
- Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, էքսկուրսիաներ,մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն)
- Խրախուսման միջոցների հիմնում («Տարվա աշակերտ», «Տարվա շրջանավարտ» անվանակարգերը, շնորհակալագրեր՝ դպրոցասիրության և դպրոցը լավագույնս ներկայացնելու համար, շնորհակալագրեր հայրենիքի պաշտպանությանը մասնակցած շրջանավարտներին՝ դպրոցի սերմանած հայրենասիրական դաստիարակությանը հավատարիմ մնալու և հայրենիքի հանդեպ պարտքը պատվով կատարելու համար)
- Սովորողների մասնակցությունը միջազգային և հանրապետական մրցույթներին
- Լաբորատորիաների բարեկարգում
- Ռեսուրս սենյակի հիմնում
- Գույքի բարելավում
- Դպրոցի վերանորոգում և ընդհանուր պայմանների բարելավում

Կրթական կարիքների նկարագիրը

Միջնակարգ դպրոցի նպատակն իր սովորողներին ազգային հենքի վրա տարրական և հիմնական որակյալ կրթությունտալն է՝ապահովելով բազմակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել ավագ դպրոցներում, նախնական մասնագիտական (արեհեստագործական), միջնակարգ–մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններում:

Այսօր և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը /հատկապես՝ որակյալ կրթությունը/ և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Յուրաքանչյուր երեխա կարող է սովորել՝ իր կրթական կարիքներին համապատասխան: Շատ կարևոր է կազմակերպել տարբերակված ուսուցում՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ յուրաքանչյուր երեխայի համար՝ ինչպես օժտված, այնպես էլ համեմատաբար ցածր

առաջադիմություն ունեցող երեխաների ունակությունները զարգացնելու համար:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Դպրոցի հիմնական առաքելությունը եղել և մնում է ժամանակի պահանջներին համապատասխան սերունդ կրթելն ու դաստիարակելը: Զարգացող ազգային դպրոցը հզոր պետության երաշխիքն է, անվտանգության երաշխավորը: Պետության և ազգի անվտանգության հզորացման ապահովման գործում գերակա խնդիր է պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ անհատի ձևավորումը: Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ձևերի,մեթոդների և մոտեցումների վերանայում, հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշտում:

Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին , մարդկային ռեսուրսներին և ներուժին: Կրթության կազմակերպման արդյունավետությունը կախված է այն բանից, թե որքանով են դպրոցի ենթակառուցվածքները համապատասխանում արդի չափորոշիչներին: «Նոր Կեսարիայի միջնակարգ» ՊՈԱԿ-ը, ցավոք, զուրկ է ենթակառուցվածքային հարմարություններից.

Հանդիսությունների դահլիճ

- Կիսաքանդ բեմ
- Կոտրված, գործածության համար ոչ պիտանի նստարաններ
- Հնամաշ վարագույրներ

Լաբորատորիաներ

- Առկա են կոսմետիկ վերանորոգված դասասենյակներ՝ բետոնե հատակով
- Գույքը և նյութերը բացակայում են
- Առկա չեն ոչ մի տիպի արհեստանոցներ

Առարկայական կաբինետներ

- Ոչ միայն կաբինետներ չկան՝ այլև դպրոցում նորացված դիդակտիկ պարագաներն են բացակայում, եղածն էլ հնամաշ են

Ճաշարան

- Առկա է նորոգված ճաշարան տարրական դպրոցի աշակերտների համար
- Գույքի, սպասքի և տեխնիկայի կարիք կա

Բուժկետ

- Բացակայում է

Սպորտդահլիճ

- Հնամաշ գույք
- Քանդված հանդերձարաններ

Գրադարան

- Հնամաշ գրքեր,
- Կոտրտված դարակաշարեր
- Կոտրված և մաշված սեղան-աթոռներ

2.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

2.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը

«Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության: «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և դպրոցի Կանոնադրությամբ: Տրված լիցենզիաների համաձայն դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ հանրակրթական ծրագրերը.



Դպրոցն հիմնադրվել է 1974թ-ին, ունի մեկ մասնաշենք , աշխատում է հնգօրյա աշխատանքային շաբաթով և միահերթ: Հիմնադրման օրվանից ի վեր չի հիմնանորոգվել, միայն 2010 թվականին փոխվել են տանիքը, պատուհանները, իսկ 2012-2013թթ. հիմնանորոգվել է ջեռուցման համակարգը:

Դպրոցն ունի հանդիսությունների դահլիճ, որն անմխիթար վիճակում է գտնվում. չունի կահավորանք, նստարաններ և ունի հիմնանորոգման կարիք :

Դպրոցն ունի սպորտդահլիճ, որը նույնպես կիսաքանդ վիճակում է գտնվում, չունի մարզագույք, ինչը խոչընդոտում է ֆիզկուլտուրայի դասապրոցեսի պատշաճ իրականացմանը:

Դպրոցում առկա է 12 դասասենյակ, երկու վարչական սենյակ, մեկ ուսուցչանոց, ԿԱՊԿՈՒ սովորողներին մասնագիտական աջակցության համար առանձին սենյակներ տրամադրելու հնարավորություն չկա՝ աջակցությունը տրամադրվում է այլ կաբինետում, մեկ ՆԶՊ կաբինետ, որը նույնպես կահավորված չէ, զենքի պահեստ, մեկ համակարգչային կաբինետ, մեկ ճաշարան-խոհանոց, ճաշասրահ և պահեստ (վերանորոգված, բայց չկահավորված), դպրոցի շենքում առկա է մեկ սանհանգույց նախակրթարանի սաների համար, և մեկ սանհանգույց՝ աշակերտների համար:

Դպրոցն ունի բացօթյա սպորտհրապարակ՝ ֆուտբոլի և վոլեյբոլի, որը նույնպես ունի վերանորոգման կարիք: Ունի ավելի քան 3 հա դպրոցամերձ հողամաս, սակայն չունի ջրամատակարարում, ինչը անհնար է դարձնում կանաչապատումը և նպատակային օգտագործումը: Դպրոցի տարածքը ցանկապատված է,

սակայն տեղ-տեղ ցանկապատը բացակայում է, որի պատճառով

գյուղացիների անասուններն անխոչընդոտ մուտք են գործում դպրոցի տարածք: Դա էլ իր հերթին վտանգ է ներկայացնում աշակերտների անվտանգության համար:

Շենքը կարիք ունի հիմնանորոգման: Հոսանքի լարերը չեն փոխվել և ունեն բազմաթիվ խնդիրներ: Առկա է նաև սեյսմիկ վտանգ:

2022 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ դպրոցում աշխատում են 21 ուսուցիչներ, որոնցից բարձրագույն մասնագիտական կրթություն ունեն քսան ուսուցիչներ, միջին մասնագիտական կրթությամբ՝ մեկը, ով կենսաթոշակային տարիքում է, տարակարգ ունեցող ուսուցիչ չունենք: Դպրոցում սովորողների թիվը 220 (երկու հարյուր քսան) աշակերտ է և 22 (քսաներկու) նախակրթարանի սան:

Դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը փոխտնօրեն Գարան Պապոյանն է, ով պաշտոնավարում է 24.10.2022թվականից:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցն ունի վերանորոգված տանիք • Դպրոցն ունի լոկալ ջեռուցման համակարգ • Բացօթյա սպորտհրապարակ • Ավելի քան 3հա հողատարածք • Վերանորոգված ճաշարան, տաք սնունդ,	• Դպրոցի շենքն ունի հիմնանորոգման կարիք, առկա է սեյսմիկ վտանք • Դասասենյակներն ունեն վերանորոգման կարիք • Սպորտդահլիճն ու հանդիսությունների դահլիճն անմխիթար վիճակում են

որտեղ սնվում են նախակրթարանի և տարրական դպրոցի երեխաները	• Սպորտհրապարակն ունի վերանորոգման և կահավորման կարիք • Դպրոցի ցանկապատը տեղ-տեղ բացակայում է

2.2. ՈՒսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն

Ուսումնական պարապմունքներն անցկացնելու համար առկա են կիսաքանդ դասասենյակներ, առարկայական պաստառներ,դիդակտիկ նյութեր չկան, նստարանները (եթե կարելի է այդպես անվանել) կոտրված են, ուսուցչական սեղանները հազիվ են կանգնած մնում, աթոռները՝ կոտրտված :



2023 թվականին նախատեսվում է բնագիտական առարկաների չորս լաբորատորիաների հիմնադրում և կահավորում: Դրա համար դպրոցը ստացել է հանձնարարական՝ երկրորդ հարկում ապահովել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ:

Հարցը լուծում է ստացել մասնակիորեն, քանի որ դպրոցի սուղ միջոցներով և Ծնողական համայնքի աջակցությամբ կարողացել են միայն կոսմետիկ վերանորոգում կատարել, իսկ բետոնե հատակը մնացել է, չի վերանորոգվել:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցի տարրական դպրոցի և նախակրթարանի սաների համար կազմակերպվում է ամենօրյա տաք սննդի տրամադրում, որի նպատակով հատկացվել և կահավորվել են խոհանոց, ճաշարան և սննդի պահեստ: Առկա է սառնարան, գազօջախ, պահարաններ, սեղաններ, աթոռներ, լվացարաններ, ջեռոց, անհրաժեշտ սպասք • Դպրոցն ունի մեկ էլեկտրոնային գրատախտակ • Մեկ մոնիտոր, մեկ լուսացրիչ, բարձրախոս, նվագարկիչ • Դպրոցն ունի մեկ ուսումնական զենք	• Դասասենյակները չունեն անհրաժեշտ գույք և տեխնիկա • Ուսումնական հաստատությունը հագեցած չէ կրթական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով • Գրադարանը կարիք ունի նոր (այդ թվում՝ օտարալեզու) գրականությամբ համալրման • Գրադարանում գրքերի տրամադրման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ունենալ առկա գրականության էլեկտրոնային հաշվառում: • Ժամանակակից դասապրոցեսի կազմակերպման անհրաժեշտության աճին զուգահեռ՝ Դպրոցն ունի նոր համակարգչային տեխնիկայի ձեռք բերման կարիք • Դպրոցը չունի զենքի պահեստ

2.3. Հաստատության կառավարման մարնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը

Հաստատության կառավարման խորհուրդը միացյալ խորհուրդ է 14 անդամից կազմված. նրանք են՝



Ըստ անհրաժեշտության հրավիրվում են խորհրդի նիստեր: Կառավարման խորհուրդը հազվադեպ է հանդես գալիս առաջարկություններով: Վերջին ուսումնական տարում դպրոցում իրականացվել է 5 դասասենյակների վերանորոգում , որոնք հետագայում լինելու են լաբորատորիաներ: Վերանորոգումն իրականացվել է դպրոցի բյուջեի հաշվին, սակայն աշխատանքներն ավարտին հասցնելու համար գումարը չի բավականացրել, լրացուցիչ ֆինանսավորման համար անհրաժեշտ է եղել կատարել հոդվածային փոփոխություն : Կառավարման խորհուրդը կողմ է քվեարկել նախաձեռնությանը, ինչի արդյունքում ավարտել են վերանորոգման աշխատանքները: Կառավարման խորհուրդը երբևէ չի խոչընդոտում դպրոցի աշխատանքներին: Ծրագրի շրջանակներում ցանկանում ենք իրականացնել որոշ փոփոխություններ, այն է նպաստել, որպեսզի կառավարման խորհուրդը սկսի հանդես գալ

առաջարկություններով , կատարել հաստիքային փոփոխություններ, բազմաբնույթ գործողություններ, որոնք կնպաստեն ուսման որակի բարձրացմանը, պայմանների բարելավմանը, դպրոցի զարգացմանը և վարկանիշի բարձրացմանը:

Դպրոցում գործում են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները՝



Մանկավարժական խորհուրդ

Որակյալ կրթություն ունենալու համար պետք է

- Աջակցելով ուսուցիչներին՝ նախապատրաստել ատեստավորման
- Առավել հաճախ կազմակերպել մասնագիտական և մեթոդական միավորումների նիստեր
- Ընդլայնել ՏՀՏ գործիքների ներդրման գործընթացը. կազմակերպել հատուկ դասընթացներ, ինչը կնպաստի, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից
- Խրախուսել ուսուցիչներին ինքնակրթման ու ինքնազարգացման

Կառավարման միացյալ խորհուրդ

14 անդամ



Դպրոցի գործունեության թափանցիկության գործում մեծ է կառավարման խորհրդի դերը. Այն պետք է ակտիվ մասնակցություն ունենա դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության պլանավորման աշխատանքներում՝ ի շահ ֆինանսական միջոցների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը:

Ծնողական խորհուրդ

Մեծացնել ծնող-դպրոց համագործակցությունը, ինչը կնպաստի խնդիրների արագ վերհանման և արագ լուծումներ գտնելուն

Աշակերտական խորհուրդ

Ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ աշակերտները հանդես կգան ազատ և անկաշկանդ՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Հիմք ընդունելով ՀՀ օրինակելի կանոնադրության դրույթները՝ բոլոր խորհրդակցական մարմինները պետք է մշակեն իրենց ներքին կանոնադրությունը, որը պետք է համապատասխանի դպրոցի և համայնքի պահանջներին և հնարավորություններին, և բխի աշակերտների շահերից: Ինքս կարևորում եմ բոլոր խորհուրդների ինքնավար գործունեությունը, իրենց գործողություններում ազատ լինելու հնարավորությունը:

Խորհրդակցական մարմինների ճիշտ, դրական, անկողմնակալ և նվիրված աշխատանքի արդյունավետությունից է կախված դպրոցի ընդհանուր վարկանիշը: Աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման համարնախատեսում եմ ստեղծել հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ, ինչը թույլ կտա դպրոցն ավարտած շահագրգիռ անձանց մասնակցություն ունենալ դպրոցաշինության գործում:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցի կառավարման խորհրդի անդամները առաջադրվել են լիազորված մարմնի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և ՏԻՄ ղեկավարի կողմից, ինչի շնորհիվ երաշխավորված են խորհրդի ինքնավարությունը, իր գործողություններում ազատ լինելու հնարավորությունը և անկաշկանդվածությունը: • Դպրոցի կառավարման խորհուրդն ակտիվորեն ներգրավված է Դպրոցի կառավարման գործում, կազմակերպվում են խորհրդի նիստեր, որոնց ընթացքում քննարկվում են Դպրոցի կառավարման օրակարգային հարցերը: • Դպրոցի տնօրենը ներկայացնում, և կառավարման խորհուրդը քննարկում է Դպրոցի գործունեությանը վերաբերող հարցեր: • Կառավարման խորհուրդը վերահսկողություն է իրականացնում Դպրոցի զարգացման ծրագրի	• Դպրոցը չունի շրջանավարտների խորհուրդ և հոգաբարձուների խորհուրդ: • Աշակերտական խորհուրդը բավարար չափով ակտիվ չէ, հաճախ հանդես չի գալիս սեփական նախաձեռնություններով:

կատարման նկատմամբ։ • Դպրոցի մանկավարժական խորհուրդը ակտիվորեն ներգրավված է հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական ծրագրերի իրականացման գործում, հայտնում է իր դիրքորոշումը ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի առնչությամբ, ընդունում որոշումներ օրակարգային հարցերի մասին։ • Դպրոցի ծնողական խորհուրդը կապող օղակ է հանդիսանում Դպրոցի և ծնողական համայնքի միջև, ապահովում է ծնողների ներգրավվումը սովորողների արտադպրոցական աշխատանքներում, երաշխավորում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում։ • Դպրոցի աշակերտական խորհուրդն օժտված է սովորողների ինքնավարության ու ինքնակառավարման լիազորություններով, ներգրավված է Դպրոցի գործունեության կազմակերպման գործում, երաշխավորված են սովորողներին վերաբերող հարցերի շուրջ աշակերտական խորհրդի՝ ազատ կարծիք հայտնելու և կամաարտահայտության իրավունքները։	

2.4 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

Կրթության որակն ապահովելու գործում մեծ կարևորություն ունեն մանկավարժական համակազմի մասնագիտական որակները:
Իմ աշխատանքի ընթացքում աջակցելու եմ մանկավարժներին՝ ատեստավորումների, զանազան վերապատրաստումների,ինչու չէ, կամավոր ատեստավորման դիմելիս: Այժմ դպրոցում աշխատում են 21 մանկավարժներ, սակայն չունենք կամավոր ատեստավորումը հաղթահարած և տարակարգ ունեցող ուսուցիչներ: Կարևոր է նաև, որ ուսուցիչները տեղյակ լինեն նոր չափորոշչային պահանջներին և դրանք կիրառեն դասապրոցեսի ընթացքում:

Ուսուցիչն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորություն պիտի ստանա: Նա իր մասնագիտական աճը, սակայն, պիտի ստանա դպրոցում՝ իր աշխատանքի ընթացքում: Նաև կարևորում եմ ուսուցիչներին խրատուսելն ու պարգևատրելը, ինչը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ: Եթե դպրոցն ունի փորձառու ուսուցիչներ կամ մեթոդիստներ, ապա նրանք կարող են սկսնակ և սակավափորձ ուսուցիչների համար վերապատրաստողներ լինել:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցի բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն և ատեստավորված են: • Դպրոցի մանկավարժական համակազմը շարունակաբար մասնակցում է մասնագիտական որակավորումների բարձրացմանն ուղղված դասընթացների, սեմինարների և վեբինարների: • Սկսնակ ուսուցիչների հետ մասնախմբի խմբի ղեկավարների հանձնարարությամբ տրամադրվում են մասնագիտական զարգացմանը նպաստող խորհրդատվություններ, նախապատրաստում են՝ մասնակցելու ատեստավորման վերապատրաստումների:	• Մանկավարժական համակազմում չկան պետական պարգևներ և տարակարգ ունեցող, ինչպես նաև կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ: • Տարվա լավագույն ուսուցիչ և մասնագիտական այլ մրցույթների, տարակարգի ստացման, կամավոր ատեստավորման մասնակցության պասսիվություն: • Դպրոցի տեխնիկական հագեցվածության բացակայության պատճառով ուսուցիչները չեն կարողանում ՏՀՏ-ներ կիրառել դասերի ընթացքում:

2.5 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների ու նորարարությունների ներկայացումը, դրանց տեղն ու դերը դպրոցի զարգացման գործում

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Կրթակարգը ուսուցչի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության ակնկալիքները հանրակրթությունից:

Համաշխարհային կրթական զարգացումներում նկատվում են հանրակրթության բովանդակության ձևավորման և ուսումնադաստիարակչական աշխատանքների

կազմակերպման նոր մոտեցումներ, ինչը տեղի է ունենում նաև մեր կրթական համակարգում և նաև մեր դպրոցում:

Այսօրվա մարդու կյանքում համակարգիչը հույժ կարևոր դեր ու նշանակություն է ստացել: Այն իր ծառայությունն է բերում նաև հանրակրթության ոլորտին: Էլեկտրոնային դասագրքերն ու ուսումնական նյութերն արդեն «սպառնում են» հետին պլան մղել նրանց թղթային տարբերակները: Համակարգիչը տեղեկույթի ձեռքբերման ու հաղորդման ամենատարածված և ամենաարդյունավետ միջոցն է դարձել: Այս պարագայում առանձնահատուկ կարևորություն է ստանում սովորողների տեղեկատվական մտահասության (կոմպետենտության) պատշաճ մակարդակի ձևավորման խնդիրը: Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները դարձել են զարգացած երկրների հասարակական կյանքի ամենակարևոր տարրերը, իսկ գիտելիքն ու տեղեկույթը՝ առաջընթացի որոշիչ գործոններ: Բնական ռեսուրսները, արդյունաբերական ու ռազմական հզորությունը, ինչպես նշում են այդ հասարակարգի նշանավոր հետազոտողները, այլևս կայուն զարգացման ու բարգավաճման երաշխիքներ չեն տալիս:

Ամենահզոր կապիտալ է դառնում մարդը, նրա ինտելեկտուալ ու ստեղծագործական ընդունակությունները, ինչը պետության մրցակցային ներուժը դարձնում է կախյալ նրա քաղաքացիների գիտական ու կրթական մակարդակից:

Այս պարագան էլ հենց ամբողջ աշխարհում կրթական բարեփոխումների՝ կրթության բովանդակության վերակառուցման, ուսուցման կազմակերպման նոր՝ ժամանակին հարիր ձևերի որոնման հզոր ալիք է առաջացրել:

Գիտելիքների արագ զարգացման և նրանց մի մասի հնացման պայմաններում ուսուցման բովանդակությունը ևս կրում է համապատասխան փոփոխություններ. սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ, այն ինչ համեմատաբար կայուն է ժամանակի մեջ: Եթե սովորողը տիրապետում է տվյալ գիտության հիմունքներին և ընդունակ է սովորելու, ապա նոր իրավիճակներում նա կարող է գիտելիքների պակասը լրացնել ինքնուսուցմամբ:

Ժամանակակից մանկավարժությունը հակված է կրթության բովանդակությունը մեկնաբանելու որպես մանկավարժականացված սոցիալական փորձ, կամ սոցիալական փորձի մանկավարժական մոդել: Սա նշանակում է, որ կրթության բովանդակության մեջ պետք է արտացոլվի տվյալ հասարակության կուտակած մշակութային արժեքները, այնպես որ սովորողները ձեռք բերեն ոչ թե վերացական, կյանքից կտրված ինչ-որ գիտելիքներ ու կարողություններ, այլ կարողանան ներքնայնացնել առկա մշակութային արժեքներն ու ապրել դրանցով: Այսպիսով, մանկավարժական նոր մոտեցումները պահանջում են մի կողմից ձևավորել մարդուն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ, մյուս կողմից մարդուն հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար զարգացնել այնպիսի

որակներ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, հավակնությունների մակարդակը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ու վճիռներ կայացնելու հմտությունները: Այս խնդիրների լուծման մի միջոց են ինտերակտիվ ուսուցման մեթոդները, ՏՀՏ-ն, կրթական այլ տեխնոլոգիաները, նորարարությունները: Մեր դպրոցում կա համակարգիչների պակաս, ինչը թույլ չի տալիս ուսուցիչներին կազմակերպել և անցկացնել ինտերակտիվ դասեր, որոնց ընթացքում կկարողանան կիրառել ՏՀՏ զանազան գործիքներ: Ուստի անհրաժեշտ է համալրել դպրոցի նյութատեխնիկական բազան համակարգիչներով, դիդակտիկ նյութերով և ուսումնաօժանդակ այլ գործիքներով, ինչը կբարձրացնի կրթության որակը:

Այս ամենին զուգահեռ անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչները մշտապես զբաղվեն ինքնակրթությամբ, նրանք պետք է կարողանան ժամանակին համընթաց քայլել, ուստի որպեսզի կարողանանք այս ամենը համադրել, որպես հարցի լուծում տեսնում ենք ծրագրավորողների , ՏՀՏ մասնագետների դասախոսությունների կազմակերպումը մեր դպրոցում, որպեսզի նրանք ուսուցիչներին և կրթական ոլորտի ներկայացուցիչներին կարողանան օգնել հարստացնելու իրենց գիտելիքների պաշարը: Այս հարցում նախ մեզ կարող է օգնել մեր ինֆորմատիկայի ուսուցիչը, ում հնարավորություն կտանք դասերից հետո օրինակելի դասի միջոցով ներկայացնել համակարգչային ծրագրերը, նոր պրոդուկտները,գործիքները և քանի որ մեր համակարգիչների թիվը խիստ սահմանափակ է , իսկ տեսական գիտելիքները գործնականում ամրապնդել է պետք , ապա մինչ համակարգիչներով բոլորին ապահովելը, ուսուցիչները կարող են օգտվել իրենց նոութբուքներից՝ կազմելով խմբեր:

Այսպիսի աշխատանքներ պետք է կազմակերպել պարբերաբար:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցն ունի մեկական լուսացրիչ, մոնիտոր, 4 համակարգիչ • Դպրոցի ողջ տարածքն ապահովված է անլար և լարային ինտերնետային կապով • Ելնելով պրակտիկ դասերի կազմակերպման անհրաժեշտությունից՝ վերջին	• Դպրոցն չունի քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ: • Սովորողների տեխնոլոգիական կրթությունը, գիտության, տեխնոլոգիայի, ինժեներության և մաթեմատիկայի (STEM) գիտելիքների խորացումն էապես կշահեն «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի

տարիներին համակարգչով, ինտերակտիվ գրատախտակով ու լուսացրիչով է համալրվել ինֆորմատիկայի կաբինետը:	ներդմամբ: • Դպրոցն ունի նոր համակարգիչների կարիք • Դասասենյակներում, ուսուցչանոցում և գրադարանում չկան համակարգիչներ • Դպրոցում առկա 4 համակարգիչները չեն բավականացնում արդյունավետ ՏՀՏ դասեր անցկացնելու համար

2.6 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին ՀՀ օրենքի 5-րդ բաժնի 10-րդ կետը սահմանում է. «Հանրակրթության և նախնական մասնագիտական կրթության ոլորտում հիմնական գերակայությունը որակի բարձրացումն է, որի նախապայմանն է ուսումնական հաստատությունների կողմից կրթական առաքելության գիտակցումը»: Կրության որակի վրա ազդում են մի քանի գործոններ.



Դպրոցի գործունեության գնահատումը հիմնականում կատարվում է՝ աշակերտների կրթության որակից ելնելով, ինչի համար կարևորում եմ դրան նպաստող յուրաքանչյուր քայլի անհրաժեշտությունը:

Կրթության որակի բարձրացման ճանապարհին անփոխարինելի են չափորոշիչները, որակյալ ուսուցիչների առկայությունը:

«Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: Այս նպատակով սկիզբ է դրվել բազմաթիվ նախաձեռնությունների, որոնք ներառում են կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝ մարդկային ռեսուրսները, ծրագրամեթոդական ապահովումը, նորմատիվ–իրավական դաշտը, ինստիտուցիոնալ համակարգը: ***Իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են.***



Հանրապետության դպրոցների մեծամասնության հագեցվածությունը տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներով (ՏՀՏ), դասավանդող ուսուցիչներին համապատասխան համակարգչային գիտելիքներով զինող վերապատրաստման ծրագրերը և դասընթացները դրանց կիրառման լայն հնարավորություն են ընձեռում: Հանրակրթության կազմակերպման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառվում են ամենատարբեր նպատակներով՝ դպրոցավարություն, այլ դպրոցների և կազմակերպությունների հետ համագործակցություն, դպրոցական լայնածավալ նախագծեր, հետազոտական ու փորձի փոխանակման աշխատանքներ, ուսուցիչների հեռավար ուսուցում իրականացնելու, ուսումնական գործընթացը կազմակերպելու, կրթական նյութեր և ուսումնական նորություններ որոնելու, շնորհանդեսներ պատրաստելու, աշակերտների, ծնողների և մասնագետների հետ հաղորդակցվելու, հաշվետվություններ ներկայացնելու համար, ցանկացած առարկայի դասավանդման գործընթացում:



Մեր ծրագրի միջոցով կհամալրենք այս շարքը՝
➢ Ապահովել ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը ➢ Դասապրոցեսում ներդնել նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ ➢ Պարբերաբար իրականացնել մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ ➢ Հետևողական լինել կրթության որակի շարունակական բարձրացման գործընթացում ➢ Բարձրացնել դպրոցի վարկանիշը

01
Երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում
02
Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով
03
Ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի ներդրում
04
Որակի ապահովման մեխանիզմների ստեղծում և ամրապնդում
05
Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում
06
Աջակցություն մանկավարժական կրթության բարեփոխումներին:

Հանրակրթության որակի բերալավման քայլարշավ
SCHOOL


Պետք է խրախուսել թե ուսուցչին, և թե աշակերտին
Ապահովել համագործակցությունը ծնողի հետ
Համալրել նյութատեղնիկական բազան
Արժևորել կրթության դերը անհատի ձևավորման գործում
Հետևողականություն ցուցաբերել

2.7 Բազմակարծիք, ներառական եվ մասնակցային արժեքային միջավայրի վերլուծությունը

Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի մարդկային ու ֆունկցիոնալ զարգացմանը նպաստող միջոց ՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: Տեսագործնական հետազոտությունները ցույց են տալիս , որ բազմաթիվ ուսուցիչներ կարծում են , որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ է հատուկ կրթություն: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ ԿԱՊԿՈՒ երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում: Այսպիսի եզրակացություն արեցինք մենք, երբ քննարկման դրեցինք հարցը:

Հայաստանի Հանրապետությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթությունը կարգավորվում է «Կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով:

Հայաստանում ներառական կրթության համակարգը որպես ազգային քաղաքականություն , պաշտոնապես ընդունվել է 2003 թվականին: Այդ ժամանակից ի վեր տեղական միջազգային բազմաթիվ կազմակերպություններ նախաձեռնել են նոր ընդունված համակարգին համահունչ ծրագրեր՝ ուսուցիչներին և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին օժանդակելու համար: Այդ ջանքերի շնորհիվ այսօր շատ դպրոցներ մ այդ թվում նաև մեր դպրոցը , ապահովում են կրթության առանջնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը:

Ըստ կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից ուսումնասիրությունների Հայաստանում գործում է ոչ թե ներառական , այլ ինտեգրված կրթություն: Այսինքն, ԿԱՊԿՈՒ երեխան ինտեգրվում է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում:

Դպրոցում կան ուսուցման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 7 երեխաներ՝ 1 աուտիկ, 2 թեթև և 4 միջին գնահատված: Նրանց կարիքները վկայագրված են, ինտեգրված են դասարանների համակազմերում և մասնակցում են

դպրոցի բոլոր միջոցառումներին: Երեխաները չունեն ռեսուրս սենյակ, նրանց աջակցություն տրամադրում են այդ պահին ազատ դասասենյակում:

<u>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման մեր ռազմավարությունը հինգամյա կտրվածքով կառուցվելու է հետևյալ ելակետային դրույթների վրա.</u>
• Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունք ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման
• Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից
• Երեխայի համակողմանի և բնականոն զարգացման նպատակով նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից առանձնացման

Դպրոցի զարգացման մեր ծրագրի միջոցով ներառական կրթության իրականացման գործընթացում կարևորվում է բազմամասնագիտական թիմի գործունեությունը: Բազմամասնագիտական թիմի մեջ ներգրավվելու են երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետները (դասավանդող ուսուցիչներ, դասղեկ, հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող, լոգոպեդ), երեխայի ծնողը և համակարգողը: Այսօր մենք չունենք անհրաժեշտ մասնագետների թիմ: Անհրաժեշտ է համալրել հատուկ մանկավարժի, հոգեբանի թափուր հաստիքները և հինել ռեսուրս սենյակ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը լիարժեքորեն կազմակերպելու համար: Այսօր ԿԱՊԿՈՒ երեխաներին աջակցություն ցուցաբերվում է առկա դասասենյակներում՝ դասերից հետո: Ծրագրի իրականացման արդյունքում համալրելու ենք թափուր հաստիքները, հինելու ենք ռեսուրս սենյակ:

Լիարժեք թիմը գնահատում է երեխայի կրթական կարիքները, հայտնաբերում է նրա առողջապահական և սոցիալական այն կարիքները, որոնք կարող են ուղղակի ազդեցություն ունենալ նրա կրթության վրա: Մշակվում է երեխայի անհատական ուսուցման պլան՝ ուղղված կարիքի բավարարմանը: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը

կազմակերպել հանրակրթական ընդհանուր դպրոցում՝ անհատական ուսուցման պլանով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ծրագրերով:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Ապահովված են անձնակազմի առօրյա բնականոն գործունեության համար անհրաժեշտ անվտանգային, առողջապահական, սանիտարահիգիենիկ, հակահամավարակային պայմանները: • Ուսուցչամանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքը, ուսումնական գործընթացում վերջիններիս լիքարժեք ներառումը • Դպրոցում առկա է սովորողների ինքնաարտահայտման ու ինքնադրսևորման, սոցիալական անհատի ձևավորման պայմանները:	• Սովորողների կողմից իրենց իրավունքների ու պարտականությունների իմացության ոչ բավարար մակարդակ: • Դպրոցում կազմակերպվող միջոցառումներին ցածր մասնակցություն: • Դպրոցը չունի հոգեբան, սոցմանակավարժ, աջակցություն ստանում ենք ՏՄԱԿ-ից

2.8 Հալածանքի, օտարման եվ բռնության կանգարգելման գնահատման չափանիշներ

Երեխայի հանդեպ բռնությունը համընդհանուր խնդիր է: Միջազգային նորմերով այն գնահատվում է որպես երեխաների հիմնական իրավունքների և ազատությունների խախտում: Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 19-րդ հոդվածը երաշխավորում է երեխաների պաշտպանությունը բռնություններից ու չարաշահումներից: Հասարակության մեջ բռնության երևույթի առկայության մասին են վկայում մասնակի հետազոտությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից ստացված պաշտոնական տեղեկությունները, ինչպես նաև տարբեր ծառայություններից, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից ստացված տեղեկությունները:

Հալածանքի , օտարման և բռնության կանխարգելման նպատակով անհրաժեշտ է տիրապետել երեխայի հանդեպ բռնության և անտեսման կանխարգելման ու վերացման հիմնական ուղղություններերին.
➢ Երեխայի կյանքի անվտանգությանը, նրա ազատության և արժանապատվության պաշտպանությանն ուղղված ռազմավարության կատարելագործումը.
➢ երեխայի հանդեպ բռնության դեպքերի, իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման կառուցակարգերի ստեղծումը.
➢ ընտանիքում երեխայի հանդեպ բռնության և անտեսման երևույթի կանխարգելմանը, բռնության ենթարկված երեխայի, ինչպես նաև բռնություն գործադրող անձի սոցիալական վերականգնմանն ուղղված սոցիալական աջակցության համակարգի ներդրումը.
➢ երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելմանը և վերացմանն ուղղված կրթական ծրագրերի ներդրումը.
➢ երեխայի հանդեպ բռնությունը կանխարգելող և բռնության ենթարկված երեխայի վերականգնումն իրականացնող մարմինների միջև համագործակցության կառուցակարգերի ստեղծումը.
➢ երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելմանը և վերացմանը, բռնության ենթարկված երեխաների, ինչպես նաև բռնություն գործադրող անձի վերականգնմանն ուղղված պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների համագործակցության ապահովումը.
➢ զանգվածային լրատվության միջոցով երեխայի հանդեպ բռնության երևույթի նկատմամբ հասարակության կողմից անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորումը:

ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշմամբ հաստատված են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, ըստ որի մեր դպրոցը սահմանված կարգով ապահովում է և շարունակելու է ապահովել երեխայի պաշտպանությունը հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, սեռական շահագործումից և այլասերումից,

դաժան վերաբերմունքից, անուշադրությունից ու անարդարությունից, առողջությանը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցի ողջ անձնակազմի կողմից աշխատանքներ են տարվում Դպրոցում բռնության ու հալածանքի (բուլինգ) ցանկացած ձևի կանխարգելման ուղղությամբ, սովորողների շրջանում բացատրական աշխատանքներ են տարվում ցանկացած հիմքով (արտաքին տեսքի, սոցիալական դրության, ծնողների կարգավիճակի, ազգային պատկանելիության) խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ: • Դպրոցի անձնակազմի և շահառու այլ կողմերի գործուն ներգրավվածությամբ աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ, առանձին քննարկումների ընթացքում ներկայացվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները: • Դպրոցում երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ ուսուցչամանկավարժական համակազմի ազատ կամաարտահայտության իրավունքները, բացառված են այլակարծությունը սահմանափակող գործոնները:	• Դպրոցում առկա է շենքային անհարմարություններ, չկա ռեսուրս-սենյակ, • Կա տեղեկատվության պակաս

2.9 Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի եվ գործընկերների հետ

Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններ ու խնդիրներ, և դրանց լուծումներն էապես պայմանավորված են նրանց համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց ու երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս՝ ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Այդ պատճառով էլ ծնողի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված՝ չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում:

Այս ծրագրի շրջանակում սահմանում ենք համագործակցության ուղիներ: Ուսուցիչների և ծնողների փոխներգործության ակտիվ մեթոդներ կարող են լինել փորձի փոխանակման համաժողովները, հարց ու պատասխանի երեկոները, բանավեճերը, ուսուցիչների ու մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն) հետ հանդիպումները: Երկխոսության պարագայում շոշափվում են խնդիրներ, որոնք երկկողմանի մտահոգության առարկա են, կամ ընդհակառակը՝ փոխանակվում են խնդիրների այն հարթակները, որոնք անհանգստացնում են կա՛մ ուսուցչին, կա՛մ ծնողին: Խնդիրները կարող են լինել ամենապարզից ամենաբարդ: Ներկայացնենք ամենապարզ օրինակներից մեկը, որն հանդիպում է յուրաքանչյուր կրթական միջավայրում: Օրինակ և՛ ծնողների, և՛ ուսուցիչների համար շատ կարևոր կարող է լինել տարրական դասարանում երեխայի ձեռագիրը, տետրի ընդհանուր էսթետիկ վիճակը, որի պահպանման շուրջ տարվում են աշխատանքներ: Համագործակցության և միասնական աշխատանքների շնորհիվ հնարավոր է հասնել որոշակի արդյունքի, քանի որ մշակվում են այդ նպատակն իրականացնելու հստակ ու երկուստեք համաձայնեցված քայլեր: Այս պարագայում շատ կարևոր են դպրոցական համակարգում հոգեբանական, իրավաբանական, մանկավարժական և բժշկական խորհրդատվության ծառայությունների ներմուծումը և կիրառությունը, որը կստանձնի բեռնվածության մի մասը և բավական հաջողությամբ կլուծի ծագող հիմնախնդիրները: Վերը նշված օրինակում կարծում ենք անգնահատելի է հոգեբանի

դերը: Համապատասխան խնդրի լուծման համար կարող են հնչել հետևյալ հարցերը՝ արդյո՞ք հնարավոր է և նպատակահարմար փոխել երեխայի ձեռագիրը կամ ամբողջովին վերացնել թափթփվածությունը տետրերի նկատմամբ, կրթական գործընթացում ինչի՞ վրա պետք է հիմնական շեշտը դնել, ի՞նչը համարել առաջնային և այլն: Հոգեբանը կամ սոցիալական մանկավարժը կարող են օգնել նաև որոշելու ծնողների հետ համագործակցության նպատակը: Հատկապես հենց նրանք են տիրապետում այնպիսի տեղեկությունների, որոնք երբեք չեն ձեռքբերվում հարցման միջոցով:

Մեր հետազոտումների համաձայն՝ աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ: Նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է, և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական անձի և հնարավորությունների նկատմամբ հավատ: Երեխան կարող է լինել ընդունակ և խելացի, դասընթացներին ակտիվորեն մասնակցի և իրեն լավագույնս դրսևորի, սակայն ընտանիքում ծնողների անուշադրության պատճառով և բարձիթողի վիճակի հետևանքով դպրոցի միակողմանի աշխատանքը զգալիորեն տուժելու է: Ես որպես տնօրեն և այս ծրագրի իրականացնող պատրաստ եմ կամուրջ հանդիսանալ դպրոց-ընտանիք ակտիվ համագործակվության համար, պարբերապար իրականացնել հարցազրույցներ, բանավեճեր, հանդիպումներ, սեմինարներ:

Պետք է նշենք մի կարևոր փաստ. մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է ակադեմիական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձ:

Մեր դպրոցի Ծնողական համայնքը պատրաստակամ է դպրոցին աջակցելու: Բերենք մեկ օրինակ՝ դպրոցի ճաշարանի սպասքը տրամադրել է Ծնողական համայնքը՝ սեփական նախաձեռնությամբ: Մեկ այլ դասարանում վերանորոգել են դասասենյակի հատակը՝ դարձյալ սեփական նախաձեռնությամբ: Նման օրինակները շատ են և գովելի, ինչը փաստում է, որ մեր ծնողներն անտարբեր չեն իրենց երեխայի կրթական միջավայրի նկատմամբ:

Տեղական ինքնակառավարման մարմինները ևս գործուն աջակցություն են ունեցել դպրոցաշինության գործում. ֆինանսավորել են, որպեսզի ճաշարանի հոսանքալարերը վերանորոգվեն և եռաֆազ հոսանք անցկացնեն, ինչպես նաև գնել և նվիրել են սառնարանը և գազօջախը:

Սակայն անհրաժեշտ է առավել սերտացնել համայնք-դպրոց կապը, և մեծացնել աջակցության շրջանակները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցը համագործակցում է ՀՀ կառավարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արմավիրի մարզպետի աշխատակազմի, Մեծամորի համայնքապետարանի, Նոր Կեսարիա գյուղի վարչական ղեկավարի, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի, Գնահատման և թեստավորման կենտրոնի, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի, մարզային և համայնքային գրադարանների, Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, այլ դպրոցների, հասարակական կազմակերպությունների հետ: • Դպրոցի թե՛ աշակերտական, թե՛ մանկավարժական անձնակազմն ակտիվորեն ներգրավված է պետական և համայնքային միջոցառումներին (շաբաթօրյակ, ծառատունկ, սեմինարներ և այլն): • Արտադրպրոցական աշխատանքների իրականացման ժամանակ տարվում են աշխատանքներ ծնողական համայնքի ներկայացուցիչների հետ, իրականացվում է վերջիններիս ներգրավումը համայնքից դուրս կատարվող նպատակային այցերում:	• Բնակավայրից դուրս կազմակերպվող միջոցառումների մասնակցության բարդություններ՝ պայմանավորված աշակերտներին տեղափոխելու տրանսպորտային սահմանափակումներով: • Համայնքային մակարդակում կրթական և մարզամշակութային նախաձեռնությունների սահմանափակ թիվ: • Համագործակցության բացակայություն արտերկրի ուսումնական հաստատությունների հետ: • Ծնողական համայնքը չունի բավարար սեփական նախաձեռնողականություն, աշխատանքները կազմակերպվում են ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից:

2.10 .Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը

Ցանկացած ոլորտում հաջողության հասնելու լավագույն գրավականը բանիմաց և նվիրված աշխատողներ ունենալն է: Սակայն մերօրյա կրթական համակարգում անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչը ամենօրյա ինքնակրթությամբ զբաղվի, շարունակաբար պրպտի նոր ուղիներ և մեթոդներ դասպրոցեսն առավել հագեցած, բովանդակալից և արդյունավետ դարձնելու համար:

Դպրոցի մանկավարժական համակազմի ուսուցիչները մասնակցում են հերթական ատեստավորումներին,սակայն դա բավարար չէ կրթության որակը բարձրացնելու համար: Անհրաժեշտ է խրախուսել նորարար ուսուցիչներին ոչ միայն գովեստի խոսքերով, այլև պարգևատրել պատվոգրերով, շնորհակալագրերով,ինչը կարող է խթանել մյուս ուսուցիչներին ևս: Իմ նպատակն է աջակցել մանկավարժներին, որպեսզի դիմեն կամավոր ատեստավորմանը, տարակարգ ձեռք բերելու համար քայլեր ձեռնարկեն, մասնակցեն տարատեսակ վերապատրաստումների:

Բանիմաց ուսուցիչը կարող է բարձրացնել կրթության որակը: Ներկայումս դպրոցում ուսուցիչներին խրախուսելու գործիքներ չկան, խրախուսվում են միայն բարձր առաջադիմություն ցուցաբերած աշակերտները՝ ստանալով գովասանագրեր: Բարձրացնելով կրթության որակը՝ կունենանք օլիմպիադայի մասնակիցներ և հաղթողնել կբարձրանա դպրոցի վարկանիշը, ինչը իմ նպատակներից մեկն է:

Ուսուցիչների աշխատանքի արժևորման արդյունքում կբարձրանա նաև նրա

հեղինակությունը, ինչը կնպաստի աշակերտների շրջանում կրթության դերն արժևորելուն: Այսինքն, կարող ենք ասել, որ ուսուցչին խրախուսելն ունի շղթայական ազդեցություն.



Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Ուսումնական հաստատությունը կառավարվում է կրթության գործում ուսուցչամանկավարժական անձնակազմի դերի արժևորման ու կարևորության գիտակցմամբ: • Դպրոցի հնարավորությունների սահմաններում իրականացվում է գործունեության արդյունավետությամբ աչքի ընկած ուսուցիչների խրախուսում: • Դպրոցում խրախուսվում են տարբեր մրցույթների, վերապատրաստումներին և կամավոր ատեստացիայի մասնակցությունը:	• Ուսուցչամանկավարժական անձնակազմի ոչ բորոր անդամների մոտ է առկա ինքնակատարելագործման և ինքնակրթության մոտիվացիայի բավարար մակարդակ: • Կամավոր ատեստավորմանը մասնակցելու հետաքրքրվածության ոչ բավարար մակարդակ:

2.11. Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը

Ուսումնական որակը բարելավվելու համար անհրաժեշտ է, որպեսզի դպրոցի բյուջեն լինի նպատային և նախապես պլանավորված: Կրթական կարիքների համար նախատեսված քայլերը պետք է նախօրոք մշակել, ներկայացնել դպրոցի Կառավարման խորհրդի քննարկմանը, ստանալ հավանություն, որից հետո ներկայացնել Լիազոր մարմնի հաստատմանը: Անհրաժեշտ է դպրոցի բյուջեն նպատակային և արդյունավետ օգտագործել, քանի որ «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոցի» բյուջեն այնքան էլ մեծ չէ: Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեության հիմնական նպատակը սովորողների ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումն ու զարգացումն է սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պայմաններում: Այս իմաստով Դպրոցի առջև խնդիր է դրված՝ բարձրացնելու ֆինանսավորման պլանավորման և ծախսման արդյունավետությունը, ծախսային ուղղությունները համապատասխանեցնելու Դպրոցի և սովորողների կրթական կարիքներին: Դպրոցի ֆինանսավորումն իրականացվում է հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության կողմից՝ պետական բյուջեի միջոցներից: Ֆինանսավորման չափը ձևավորվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թվականի սեպտեմբերից կհաշվարկվի դասարանների թվով: Դպրոցին հատկացված ֆինանսական միջոցները ծախսվում են՝ ելնելով Դպրոցի կարիքներից ու հնարավորություններից: Ֆինասատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:

ԴՊՐՈՑԻ ԲՅՈՒՋԵԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Ուժեղ կողմեր

- Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործում
- Սովորողների թվաքանակի աճի ապահովում և դրան համապատասխան բյուջետային միջոցների մեծացում:

Թույլ կողմեր

- Արտաբյուջետային միջոցների բացակայություն
- Ծնողների կողմից ներդրումների բացակայություն
- Դպրոցին անհրաժեշտ հաստիքների պակաս
- Դրամաշնորհների պակաս
- Կրթությանը հատկացվող նյութական և ֆինանսական միջոցների անբավարարություն

Դպրոցի ֆինանսական միջոցների հիմնական ուղղություններն են՝

- Աշխատավարձ և դրան հարող վճարներ
- Կոմունալ վճարներ
- Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների համար վճարներ
- Ըստ պահանջի նոր չափորոշիչներին համապատասխան դասագրքերի համալրում
- Գրենական պիտույքներ
- Դպրոցական գույք, տեխնիկա
- Ուսուցման գործընթացի առավել բովանդակալից և արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ դիդակտիկ պարագաներ
- Հիգիենայի պարագաներ
- Մասնակի վերանորոգումներ

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
*Միասնական կոլեկտիվ *Նախաձեռնող աշակերտական կազմ *Պատրաստակամ ծնողներ *Բարձր կարգապահություն և պատասխանատվություն *Լոկալ ջեռուցման համակարգ *Վերանորոգված տանիք *Կոսմետիկ վերանորոգված 5 դասարն *Շենքում առկա ջրամատակարարում *Զենքի պահեստ *Վերանորոգված ճաշարան *Վերանորոգված և կահավորված նախակրթարան *Թեքահարթակի առկայությունն *Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ	*Կամավոր ատեստավորմանը չդիմած ուսուցիչներ *Մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ չունեցողներ *Ոչ բավարար շենքային պայմաններ *Համկարգիչների պակաս *Կիսաքանդ սպորտդահլիճ և հանդիսությունների դահլիճ *Չվերանորոգված դասասենյակներ *Բուժկետի բացակայություն *Բուֆետի բացակայություն *Կիսավեր գրադարան *Չբարեկարգված բակ *Մեյսմիկ վտանգ *Շախմատի դասասենյակի բացակայություն *ՆԶՊ կաբինետի բացակայություն *Դիդակտիկ նյութերի պակաս *Դպրոցում հրաձգարանի կարիք *Առարկայական օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերում հաջողությունների բացակայություն: *Արտաբյուջետային միջոցների բացակայություն *Դրամաշնորհների պակաս *Լաբորատորիաների բացակայություն (բնագիտական, ֆիզիկայի, կենսաբանության, աշխարհագրության և ինֆորմատիկայի)նախատեսվում է համալրել ԾԻԳ-ի ծրագրով 2023թ. ամառային արձակուրդների ժամանակ *Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հարմարեցված սենյակներ և սանհանգույց. *Շենքային համապատասխան տարածքների բացակայություն՝ մեկուսարան, հավելյալ աշխատասենյակներ *Նորագույն տեխնոլոգիաների ներդրման բացակայություն: *Շենքի, գույքի ակնհայտ մաշվածություն *Ապաստարանի բացակայություն

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Յուրաքանչյուր զարգացման ծրագրի նպատակներն ու խնդիրները սահմանելիս պետք է առաջնորդվել տվյալ դպրոցի իրավիճակի վերլուծության և հիմնախնդիրների բացահայտման գործնթացի արդյունքում: Նպատակը ցանկալի և նախապես կանխատեսելի վերջնարդյունքն է: Առանձնացվում են նպատակներին և խնդիրներին ներկայացվող հետևյալ պահանջները.

- *Նպատակը պետք է լինի կոնկրետ և չափելի: Չնայած հիմնականում նպատակը ձևակերպվում է որակական առումով, սակայն վերջնական արդյունքները պետք է արտահայտված լինեն քանակական տվյալներով*
- *Նպատակը ժամանակային առումով պետք է լինի որոշակի : Յուրաքանչյուր նպատակ սահմանվում է որոշակի ժամանակահատվածի համար*
- *Նպատակը պետք է իրատեսական և հասանելի լինի, այն պետք է սահմանվի՝ հաշվի առնելով իրական հնարավորությունները*
- *Նպատակները պետք է լինեն փոխհամաձայնեցված, չպետք է հակասեն իրար:*
- *Նպատակը պետք է լինի ճկուն: Քանի որ արտաքին պայմանները արագ են փոփոխվում, և շատ դեպքերում հնարավոր չէ կանխատեսել դրանք, ուստի արտաքին և ներքին գործոնների փոփոխություններին համընթաց ուսումնական հաստատության նպատակները պետք է պարբերաբար վերանայվեն*
- *Յուրաքանչյուր նպատակի իրականացման համար պետք է սահմանվեն որոշակի խնդիրներ*
- *Յուրաքանչյուր խնդրի իրականացման համար անհրաժեշտ է մշակել համապատասխան գործողությունները և ակնկալվող արդյունքները՝ նշելով դրանց պատասխանատուները, ժամկետները և իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները*

- *Սահմանված գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն տվյալ խնդրի լուծմանը և ձևակերպված լինեն հստակ, առանց երկիմաստության, ակնկալվող արդյունքները պետք է լինեն արտահայտված կոնկրետ ցուցանիշներով (թվեր, տոկոսներ, բնութագրիչներ) և հստակ ընկալելի լինեն տվյալ գործողությունն իրականացնող պատասխանատուների և կատարողների համար:*

Նպատակների մի մասը սահմանվում են՝ ելնելով դպրոցի առկա հիմնախնդիրներից: Սակայն դրանք կարող են պայմանավորված լինել նաև տվյալ դպրոցի առաքելությունից

բխող նորարական նախաձեռնություններով: Կարևոր է Զարգացման ծրագրում հստակ ձևակերպել խնդիրները և ուղիներ առաջարկել դրանց լուծման համար:

• դպրոցում բարենպաստ կրթական միջավայրի ապահովում

• առարկայական կաբինետների ձևավորում, լաբորատորիաների վերազինում և գործարկում

• դաստիարակչական գործընթացի կատարելագործում

• մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման բարձրացում

• Ժամանակակից կրթական պահանջները բավարարող ուսումնական միջավայրի ապահովում

• կրթության որակի ներքին գնահատման համակարգի կատարելագործում

• սովորողների կրթության բովանդակության վերազինում

• սովորողների հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդում, ազգային և համամարդկային արժեքների ձևավորում և զարգացում

• սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդնում

• սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղվածության և կրթության շարունակականության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորում

• խորհրդակցական մարմինների գործունեության խթանում և դերի բարձրացում

• արտաքին կապերի ձևավորում և ընդլայնում

• ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում

• կրթության մատչելիության ապահովում, դպրոցում այնպիսի հոգեբանամակավարժական միջավայրի ձևավորում, որը կնպաստի յուրաքանչյուր սովորողի համար (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) որակյալ կրթության ապահովմանը

• դպրոցի կառավարման ժողովրդավարացում

• դպրոցի զարգացման գործում շահառուների մասնակցության արդյունավետության բարձրացում:

Ուսումնական հաստատությունում առկա հիմնախնդիրները՝ ըստ առանձին ուղղությունների

Շենքային պայմաններ	• Դպրոցի բակի վերանորոգում, • Դպրոցի մարզադաշտի ցանկապատում և տարածքի բարեկարգում, • Դպրոցի շուրջօրյա ջրամատակարարման կազմակերպում, • Բուժկետի ստեղծում
Նյութատեխնիկական բազա	• Նոր գրականություն ձեռք բերելու անհրաժեշտություն, • Համակարգչային տեխնիկայի շարունակական թարմացում, • Էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու հնարավորությունների ստեղծում,
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	• Շրջանավարտների և հոգաբարձուների խորհրդի ձևավորում, • Կառավարման, խորհրդակցական մարմինների հետ համագործակցության խորացում, • Խորհրդակցական մարմինների նախաձեռնողականության բարձրացում,
Մանկավարժական համակազմ	• Մասնագիտական որակների հետևողական բարձրացում և դասավանդման մեթոդների կատարելագործում, • Մասնագիտական մրցույթների (այդ թվում՝ տարակարգերի և կամավոր ատեստավորման) մասնակցության պատրաստակամության խթանում,
Աշակերտական համակազմ	• Սովորողների առաջադիմության բարձրացում, մասնագիտական կողմնորոշման աջակցություն դեռևս միջին դասարաններում, • Սովորողների մոտ ինքնակրթության և ինքազարգացման մոտիվիացիայի ստեղծում,
Ծնողական համակազմ	• Դպրոցական և արտադպրոցական նախաձեռնություններին ծնողական համակազմի մասնակցության ցածր մակարդակ, սեփական նախաձեռնությունների պակաս, • Ծնողների կողմից էլեկտրոնային դասամատյաններում երեխաների առաջադիմության հսկողության պակաս,
Համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կողմերի հետ համագործակցություն	• Քաղաքացիական հասարակության ոչ բավարար զարգացվածությամբ պայմանավորված՝ համայնքային մակարդակում կազմակերպվող նախաձեռնություններին մասնակցելու սահմանափակ հնարավորություններ, • Դպրոց-հասարակություն գործընկերության ձևավորում:
Ուսումնական միջավայր	• Սովորողների առօրյա ուսումնառության և ինքնակրթության մոտիվացիան խթանող հարափոփոխ միջավայրի ապահովում՝ ուղղված ոչ միայն ակադեմիական գիտելիքների ստեղծմանը, այլ նաև բազմակողմանի զարգացած երիտասարդ սերնդի կերտմանը:
Կրթության որակը	• Հանրապետական և միջազգային օլիմպիադաներին ոչ բավարար մասնակցություն
Տեխնոլոգիաներ և նորարարություն	• Առաջանցիկ զարգացող տեխնոլոգիաներին և նորարարությանը համահունչ քայլելու մարտահրավերներ
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	• Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի ոչ բավարար տեղեկացվածություն թե՛ աշակերտական, թե՛ ծնողական համակազմի շրջանում:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ուսումնական հաստատության՝ 2023-2028 թվականների զարգացման ծրագրի նպատակներն են.

01 Հանրապետության կրթական զարգացման ռազմավարություններին և տեսլականին համահունչ հանրակրթական գործընթացի ապահովում,

02 Որակյալ հանրակրթության ապահովում, որը կթողարկի արդեն միջին դասարաններից մասնագիտական կողմնորոշում ունեցող շրջանավարտներ,

03 Պետության, համայնքի ու հասարակության կարիքներին ու ազգային արժեհամակարգին համապատասխան սերնդի դաստիարակում,

04 Վաղ տարիքից երկրի ու համայնքի խնդիրներն ու հնարավորությունները գիտակցող պատասխանատու քաղաքացու ձևավորում:

Սահմանված նպատակներին հասնելու համար սույն զարգացման ծրագրում սահմանվել և ձևակերպվել է համապատասխան ***խնդիրների*** շրջանակը, որն առանձին գործողությունների և միջոցառումների տեսքով ներկայացված է հաջորդիվ:

01 Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի արդիականացում,

02 կրթության որակի և սովորողների առաջադիմության բարձրացում,

03 համագործակցության խորացում դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների հետ,

04 ուսուցչամանկավարժական անձնակազմի կարողությունների զարգացում,

05 համագործակցության ընդլայնում պետական և համայնքային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ,

06 ուսումնական միջավայրի բարելավում,

07 նորարարական ու ստեղծարար տեխնոլոգիաների տեղայնացում,

08 դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի շուրջ աշխատանքների իրականացում

Զարգացման ծրագրով սահմանված ***նպատակների իրագործման և խնդիրների լուծման*** *պարագայում ակնկալվող արդյունքը 21-րդ դարի դպրոցի ստեղծումն է,* որը կունենա.

01 որակյալ կրթություն և հրապուրիչ կրթական միջավայր,

02 բարձր որակավորում ունեցող ուսուցչամանկավարժական համակազմ,

03 ինքնազարգացմամբ մոտիվացված սովորողներ,

04 մրցունակ սերունդ ձևավորելու կարողություններ,

05 մարզամշակութային կյանքի հնարավորություններ,

06 արդի նյութատեխնիկական բազա, այդ թվում՝ ՏՀՏ,

07 առաջադեմ կրթական տեխնոլոգիաներ,

08 դպրոցի խնդիրներով մտահոգ խորհրդակցական մարմիններ:

4.ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

4.1. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման պատասխանատուներ

2023-2028թթ. «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿԻ Զարգացման ծրագրով նախատեսված նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու համար

Անհրաժաշտ է հստակ սահմանել գործողությունների և քայլերի հերթականությաուն, որպեսզի մոտ ապագայում ունենանք արդի չափորոշչային պայմաններին համապատասխան կրթություն: Կրթության ցանկալի արդյունքի համար անհրաժեշտ է ծանոթանալ նոր չափորոշիչներին, դրանք քննարկել Մեթոդմիավորումների նիստերի ժամանակ, դպրոցն ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, ինչը թույլ կտա դասապրոցեսն առավել հետաքրքիր դարձնել: Նպաստել մանկավարժների մասնագիտական շարունակական կատարելագործմանը և վերապատրաստումներին ակտիվ մասնակցելուն:

h/h	Իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ	Անհրաժեշտ միջոցներ և նյութա-տեխնիկական ապահովում	Իրականացման ժամանակացույց	Արդյունքի գնահատման չափանիշներ	Պատասխանատուները	Ռիսկեր, որանց մեղմմանն ուղղված գործողություններ	Վերահսկողության մեխանիզմներ
1.	Իրականացնել կրթության որակի ստուգում, վեր հանել խնդիրները և գործողությունների ծրագիր մշակել, որը կիրականացնենք ըստ նախօրոք մշակված ժամանակացույցի ընթացիկ և հաջորդ ուսումնական տարիների համար,նոր չափորոշիչներին համապատասխան	Ֆինանսավորում և այլ միջոցներ չեն պահանջվում	2023-2024 թթ. շարունակական	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №1	Դպրոցի տնօրինություն, փոխտնօրեններ, մեթոդմիավորումներ	***Ռիսկեր***՝ Նախատեսվող աշխատանքների՝ ուսուցիչների կողմից ոչ բավարար մակարդակով իրականացում։ ***Ռիսկերի մեղմմանն ուղղված գործողություններ*** ՝ Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն ուսումնական մեթոդների հետևողական ուսուցում և փորձի փոխանակում։	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, համապատասխան մարմնամեկնումներ
2.	Ուսումնասիրել չափորոշչային նոր պահանջները, իրականացնել փորձի փոխանակում, անցկացնել փոխադարձ դասալսումներ, քննարկումներ		2023-2028թթ. շարունակական	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №1	Դպրոցի տնօրինություն, փոխտնօրեններ, ՄՄ նախագահներ, ԴԱԿ, ուսուցիչներ		Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, համապատասխան մարմնամեկնումներ

3.	Համակողմանիորեն զարգացած ՀՀ քաղաքացի ձևավորելու համար ավելացնել այցելությունները զանազան մշակութային օջախներ, կազմակերպել հանդիպումներ մշակութային գործիչների և տարբեր ՀԿ-ների հետ, համագործակցել դպրոցին մոտ զորամասի հետ	Դպրոցի բյուջե, Ծնողական համայնքի ներդրումներ	2023 թ-ի սեպտեմբերից սկսած շարունակական	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №2	Ուսուցիչներ, դասղեկներ, Ծնողական համայնք, զինղեկ	***Ռիսկեր*** ՝ Աշխատանքներում ներգրավված կողմերի վերապահ մոտեցում և ներգրավվածության մոտիվացիայի պակաս։ ***Ռիսկերի մեղմմանն ուղղված գործողություններ*** ՝ Կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորմանն ուղղված բացատրական աշխատանքներ։	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն
4.	Արդի սոցիալ-քաղաքական պայմաններում, կրթության առաջնահերթությունից բխող շենքային պայմանների բարելավում՝ բարձր կրթության որակ ունենալու համար	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ,Ծնողական համայնք	2023-2028թթ.	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №3	Տնօրինություն, հովանավորներ	***Ռիսկեր***՝ Անհրաժեշտ ֆինանսավորման բացակայություն կամ անբավարարություն։ ***Ռիսկերի մեղմմանն ուղղված գործողություններ*** ՝ Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում։	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն
5.	Հրաձգարանի համար նախատեսել տարածք, գտնել հովանավորներ, վերանորոգել և կահավորել		2025-2028թթ.		Դպրոցի տնօրինություն, հովանավորներ		Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն
6.	Ընթերցասրահի կառուցում և կահավորում իրականացնել՝ դիմելով ՏԻՄ-ին, Ծնողական համայնքին, գրադարանը նոր գրքերով համալրում		2024-2026թթ. շարունակական	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №2	ՏԻՄ, տնօրինություն, Ծնողական համայնք, ՀԿ-ներ		Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն

7.	Հստակեցնել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական կարիքները և մշակել համապատասխան գործողություններ, դիմել հովանավորներին և Լիազոր մարմնին, աջակցման կենտրոններին, ՀԿ-ներին՝ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական միջավայրը արդի չափորոշչային պահանջներին հարմարեցնելու նպատակով	Դպրոցի բյուջե, օրենադրությամբ չարգելված այլ միջոցներ	2023-2024 ուսարի շարունակական	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №3	Տնօրինություն, ՀԿ-ներ, Ծնողական համայնք, աջակցման կենտրոններ	***Ռիսկեր*** ՝Անհրաժեշտ ֆինանսավորման բացակայություն կամ անբավարարություն։ ***Ռիսկերի մեղմմանն ուղղված գործողություններ*** ՝ Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն
8.	Աջակցել ուսուցչական անձնակազմի շարունակական կատարելագործմանը, նոր մեթոդներով զինմանը	Դպրոցի բյուջե, օրենադրությամբ չարգելված այլ միջոցներ	2023-2024թթ շարունակական	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №1	Տնօրինություն ,դպրոցի ուսուցչական համակազմ	***Ռիսկեր*** ՝ Աշխատանքներում ներգրավված կողմերի վերապահ մոտեցում և ներգրավվածության մոտիվացիայի պակաս։ ***Ռիսկերի մեղմմանն ուղղված գործողություններ*** ՝ Կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորմանն ուղղված բացատրական աշխատանքներ:	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, համապատասխան արձանագրություններ
9.	Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ նախագծային ուսուցման, համակազմ ուսումնա-հետազոտական աշխատանքների անցկացման վերաբերյալ:	կրթական կենտրոններից ստացված ուսումնական նյութերը դասավանդման գործում կիրառում, վեբինարներ	2023-2024թթ շարունակական	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №1	Տնօրինությու, փոխտնօրենն եր, մեթոդմիավոր ումներ, ուսուցիչներ		Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, համապատասխան արձանագրություններ

10.	Վերանորոգել և կահավորել համակարգչային դասարանը, կազմակերպել վերապատրաստումներ ՏՀՏ գործիքների կիրառման համար	Դպրոցի բյուջե, օրենադրությամբ չարգելված այլ միջոցներ	2024-2028թթ. շարունակական	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №3	Դիմել տարբեր ՀԿ-ների, գտնել հովանավորներ	***Ռիսկեր՝*** Աշխատանքներում ներգրավված կողմերի վերապահ մոտեցում և ներգրավվածության մոտիվացիայի պակաս:Անհրաժեշտ ֆինանսավորման բացակայություն կամ անբավարարություն: ***Ռիսկերի մեղմմանն ուղղված գործողություններ՝*** Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:	Ցարգացման ծրագրի կատարման ոլորտում վերջնական արդյունքի հաշվետվություն
11.	Բարեկարգել սպորտհրապարակը, բակի տարածքը, նորոգել ցանկապատը		2023-2024թթ. շարունակական	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №3	Դպրոցի տնօրինություն, Ուսուցչական համակազմ, Աշակերտական խորհուրդ	***Ռիսկեր՝*** Անհրաժեշտ ֆինանսավորման բացակայություն կամ անբավարարություն: ***Ռիսկերի մեղմմանն ուղղված գործողություններ՝*** Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում	Ցարգացման ծրագրի կատարման ոլորտում ամենամյա հաշվետվություն
12.	Իրականացնել դասասենյակների կոսմետիկ վերանորոգում, դպրոց բյուջեի տնտեսման արդյունքում իրականացնել գույքի ձեռքբերում	Դպրոցի բյուջե, օրենադրությամբ չարգելված այլ միջոցներ	2023-2028թթ. շարունակական	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №3	Դպրոցի տնօրինություն, հովանավորներ		Ցարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն

13.	Բուժկետի ստեղծում և հարմարեցում	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ, Հովանավորներ	2026-2028թթ.	Արդյունքի գնահատման չափանիշների խումբ №2	Դպրոցի տնօրինություն		Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն
14.	«Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ստեղծում		2027-2028թթ.		Դպրոցի տնօրինություն, հովանավորների միջոցներով		Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն

5.ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Զարգացման ծրագրի արդյունավետ իրականացման համար այն պարունակում է տեղեկատվություն ծրագրի կատարման պատասխանատուների վերաբերյալ: Ընդ որում, Ծրագրի մշակումից հետո այդ տեսանկյունից անհրաժեշտ է այն պարբերաբար վերանայել՝ հաշվի առնելով հաստատության գործունեության մեջ կատարվող ընթացիկ փոփոխությունները, ինչպես նաեւ հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող բարեփոխումները. դրանց հետեւանքով կարող են փոխվել նաեւ պատասխանատուները:

Յուրաքանչյուր գործողություն իրականացնելու համար ԴԶԾ-ում առանձնացվում են պատասխանատուներ (կատարողներ): Պետք է հաշվի առնել, որ գործողությունն իրականացնող պատասխանատուն եւ կատարողներն ունենան թիմային աշխատանք կատարելու փորձ եւ հմտություններ, հակառակ դեպքում կմեծանա տվյալ գործողությունից ակնկալվող արդյունքների ռիսկայնությունը: Անհրաժեշտ է նաեւ պլանավորել պարբերական հաշվետվությունների ձեւաչափ (մեխանիզմ):

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է բոլոր պատասխանատուների փոխհամագործակցված եւ փոխներգործուն աշխատանքը: Դրա պլանավորման եւ իրականացման պատասխանատուն առաջին հերթին հաստատության տնօրենն է: Կարեւոր է ընդգծել, որ կառավարման ժողովրդավար եւ արդյունավետ մեխանիզմների ապահովման հետ մեկտեղ անհրաժեշտ է հստակ իրականացնել գործողությունների պատասխանատուների նշանակում: Ցանկալի արդյունքների հնարավոր է հասնել բացառապես հաստատության բոլոր աշխատակիցների՝ ուսումնական եւ դաստիարակչական ոլորտների ղեկավարների, առանձին ստորաբաժանումների պատասխանատուների, ուսուցիչների, մանկավարժական աշխատողների, ինչպես նաեւ՝ ուսումնաօժանդակ (վարչատնտեսական) մասի աշխատողների համընդհանուր աշխատանքի շնորհիվ:

6.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Զարգացման ծրագրով նախատեսված յուրաքանչյուր գործողություն հիմքում ընկած են քայլեր, որոնք կբարձրացնեն կրթության որակը և կունենանք արդի չափորոշչային պայմաններին բավարարող կրթություն: ԴԶԾ-ի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթաց է: Իբրև գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության յուրահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով կարող ենք չափել ակնկալիքների կատարողականները: ԴԶԾ-ն մշակելիս հիմք են ընդունվում դպրոցի կրթական, դաստիարակչական և այլ ցուցանիշները: Դրանք վիճակագրական այն տվյալներն են, որոնց միջոցով տեղեկություն ենք ստանում կրթության ընթացիկ վիճակի մասին: Ցուցանիշները վիճակագրական պարզ տվյալներ չեն, այլ կրում են որոշակի տեղեկույթ: Դպրոցի կրթական և այլ ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար: Դրանք նաև միջոցներ են, որոնց օգնությամբ կարելի է հետևել դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական բոլոր գործընթացներին, եթե դրանք հաշվարկվում են որոշակի կանոնակարգված պարբերականությամբ: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Գոյություն ունի դպրոցի կրթական ցուցանիշների երկու հիմնական տեսակ՝ պարզ և բարդ (գործունեության ցուցանիշներ): Աշխատանքների արդյունքում կունենանք.

հ/հ	***Գնահատման ենթակա գործողություն***	***Գնահատականը***	***Գնահատման չափանիշները***
1	Սովորողների կրթության որակի և առաջադիմության բարձրացում	5/գերազանց/	սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա գործողությունների ազդեցությունն հիմնավոր է, բերված են միավորային փաստարկներ
		4/շատ լավ/	գործողություններն էապես ազդել են սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա
		3/բավարար/	գործողությունների իրականացումը սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեցել է բավարար ազդեցություն, ինչը գնահատելը բարդ է
		2/վատ/	գործողությունների իրականացումը սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեցել է ոչ բավարար ազդեցություն, հատկացված միջոցների վատնումը չեն արդարացվել սպասելիքները
		1/անբավարար/	սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա գործողությունների ազդեցությունը բացակայում է
2	Դպրոցի անձնակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում	5/գերազանց/	անձնակազմի արժևորումն կարևորվում է դպրոցում, անձնակազմի խրախոսումն իրականացվում է գնահատման չափանիշների կիրառության արդյունքում, խրախուսման համակարգը վայելում է կոլեկտիվի աջակցությունը, ձևավորված է անձնակազմի ինքնակրթության նպաստավոր միջավայր, անձնակազմն աչքի է ընկնում սեփական նախաձեռնություններով, այդ թվում՝ վերապատրաստումների մասնակցությամբ
		4/շատ լավ/	առկա է արժանիքների հիման վրա անձնակազմի խրախուսում, որին, անձնակազմը վերապահումով է մոտենում, դպրոցում առկա է անձնակազմի ինքնակրթության բարենպաստ միջավայր
		3/բավարար/	անձնակազմի խրախուսման համար բոլոր պայմաններն ապահովված չեն, անձնակազմը սեփական նախաձեռնություններով քիչ է հանդես գալիս
		2/վատ/	անձնակազմի խրախուսման ժամանակ հաշվի են առնվում գնահատման սահմանափակ թվով չափանիշներ, դպրոցն անձնակազմի ինքնակրթության նպաստավոր միջավայր չէ, անձնակազմը մոտիվացված չէ սեփական նախաձեռնություններով հանդես գալու հարցում
		1/անբավարար/	գնահատման չափանիշների համակարգի հիման վրա խրախուսում չի իրականացվում:
3	Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում	5/գերազանց/	դպրոցում երաշխավորված են այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանությունը, ուսումնական գործընթացում բոլոր սովորողների ներառականությունը, ձևավորված է մասնակցային, սովորողների ինքնաարտահայման ու ինքնադրսևորման նպաստավոր միջավայր, խթանվում է ազգային և համամարդկային արժեքների համակարգը
		4/շատ լավ/	դպրոցում այլակարծությունը սահմանափակող, սովորողների շահերն ու իրավունքերը ոտնահարող դեպքեր հազվադեպ են գրանցվում, իրականցվում է արդյունավետ վերահսկողություն, առկա է սահմանափակ ներառական միջավայր
		3/բավարար/	դպրոցում սահմանափակվում է այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանությունը նշանակալի արդյունք չի ապահովում, ձևավորված չէ ներառական միջավայր, ազգային և համամարդկային արժեքների մասին սովորողների պատկերացումները աղավաղված են
		2/վատ/	դպրոցում այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանության համակարգային մոտեցում առկա չէ, կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներն առանձնացված են

			ուսումնական գործընթացից,
		1/անբավարար/	դպրոցում այլակարծությունը, սովորողների շահերն ու իրավունքների պաշտպանությունը երաշխավորված չէ, ներառական և մասնակցային արժեքային միջավայր ձևավորված չէ:
4	Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման ապահովում	5/գերազանց/	ճանաչողական գիտելիքների, մշակութային և գեղագիտական ճաշակի բարձրացման նպատակով սովորողների հետ հաճախակի տարվում են արտադպրոցական աշխատանքներ՝ ներգրավելով նաև ծնողական համայնքին, դպրոցում առկա են երկարօրյա ուսուցման ապահովման հնարավորություններ՝ մշակված սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա:
		4/շատ լավ/	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են պարբերաբար՝ ընդգրկելով սահմանափակ ուղղություններ, դպրոցի երկարօրյա ուսուցման ապահովման հնարավորությունները չեն համապատասխանում սովորողների և նրանց ծնողների կարիքների հետ
		3/բավարար/	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են ոչ պարբերաբար, դպրոցն ապահովված է երկարօրյա ուսուցման սահմանափակ հնարավորություններով
		2/վատ/	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են հազվադեպ, դպրոցն ապահովված չէ երկարօրյա ուսուցման նվազագույն հնարավորություններով
		1/անբավարար/	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքներ չեն տարվում, դպրոցն ապահովված չէ երկարօրյա ուսուցման հնարավորություններով
5	Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում	5/գերազանց/	դպրոցում բացառված են հալածանքի, օտարման և բռնության դեպքերը, առկա է առողջ բարոյահոգեբանական միջավայր, աշխատանքներ են տարվում բռնություն ստեղծող պահվածք բացառելու ուղղությամբ, յուրաքանչյուր սովորող գիտի իր իրավունքներն ու պարտականությունները, բռնության դեպքերի կանխարգելման գործում ներգրավվում են նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչները, կազմակերպվում են առանձին քննարկումներ,
		4/շատ լավ/	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր հազվադեպ են գրանցվում, յուրաքանչյուր դեպքի համար իրականացվում է տվյալ իրավիճակը պայմանավորող ազդակների ուսումնասիրություն, մշակվում է դրանց կրկնությունը կանխող գործողությունների ծրագիր,
		3/բավարար/	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր պարբերաբար գրանցվում են, առկա չեն դրանց կանխման քայլերի ծրագիր,
		2/վատ/	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելմանն ուղղված աշխատանքները ձախողված են, դպրոցում առկա անառողջ բարոյահոգեբանական միջավայրը
		1/անբավարար/	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքերը կրում են պարբերական բնույթ, խարխլված է դպրոցի բարոյահոգաբանական միջավայրը
6	Նյութատեխնիկական գույքի ձեռբերում	5/գերազանց/	ամբողջությամբ ձեռք է բերվել նախատեսված գույքը,
		4/շատ լավ/	ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 75%-ի չափով
		3/բավարար/	ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 50%-ի չափով
		2/վատ/	ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 25%-ի չափով
			նախատեսված գույքը ձեռք չի բերվել:
7	Ուսումնական հաստատության շենքային պայմանների և տարածքի	5/գերազանց/	աշխատանքները կատարվել են ամբողջությամբ,
		4/շատ լավ/	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 75%-ի չափով

	արդիականացում	3/բավարար/	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 50%-ի չափով
		2/վատ/	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 25%-ի չափով
		1/անբավարար/	նախատեսված աշխատանքները չեն կատարվել:
8	Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի շուրջ աշխատանքներ	5/գերազանց/	դպրոցում կազմվող իրավական ակտերի նախագծային փուլում առկա է անձնակազմի լայն ներգրավվածություն, կազմակերպվում են նախագծերի քննարկումներ, անձնակազմը լավ տեղեկացված է
		4/շատ լավ/	դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա է անձնակազմի սահմանափակ ներգրավվածություն, նախագծերի քննարկումներ կազմակերպվում են հազվադեպ,
		3/բավարար/	դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա է անձնակազմի սահմանափակ ներգրավվածություն, նախագծերի քննարկումներ չեն կազմակերպվում, անձնակազմը բավարար չափով տեղեկացված չէ
		2/վատ/	դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա չէ անձնակազմի բավարար ներգրավվածություն, նախագծերի քննարկումներ չեն կազմակերպվում,
		1/անբավարար/	դպրոցում իրավական ակտերը կազմվում են առանց անձնակազմի ներգրավվածություն
9	Նոր նախագծերի և նախաձեռնությունների իրականացում	5/գերազանց/	նախաձեռնությունն ամբողջությամբ իրականացվել է
		4/շատ լավ/	նախաձեռնության իրականացման ուղղությամբ զգալի աշխատանքներ են տարվել,
		3/բավարար/	նախաձեռնության իրականացման ուղղությամբ աշխատանքներ են տարվել, սակայն սահմանված ժամկետներում հնարավոր չի եղել ավարտին հասցնել
		2/վատ/	նախաձեռնության իրականացման ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են, սակայն առաջընթաց չի գրանցվել
		1/անբավարար/	նախաձեռնության իրականացման ուղղությամբ աշխատանքներ չեն մեկնարկել
10	Համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների հետ	5/գերազանց/	տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև հաստատված է արդյունավետ փոխգործունեություն, նիստերը կրում են պարբերական բնույթ, որոնց շրջանակներում քննարկվում են դպրոցում օրակարգային հարցերը
		4/շատ լավ/	տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև առկա էկայուն համագործակցություն,
		3/բավարար/	կառավարման ու խորհրդակցական մարմինների հետ համագործակցությունն իրականացվում է տնօրենի նախաձեռնությամբ,
		2/վատ/	առկա է ընդհատ հաղորդակցություն տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև,
		1/անբավարար/	տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև համագործակցությունը բացակայում է,, նիստեր չեն կազմակերպվում, կառավարումն իրականացվում է միանձնյա
11	ՏԻՄ-ի, ծնողական համայքնի, գործընկերների հետ համագործակցության խորացում	5/գերազանց/	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է ամենօրյա հաղորդակցություն, ծնողական համայնքն ակտիվորեն ներգրավված է ուսումնադաստիարակչական գործընթացում,
		4/շատ լավ/	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է արդյունավետ համագործակցություն, ծնողական համայնքը ներգրավված է ուսումնադաստիարակչական գործընթացում, սակայն սեփական նախաձեռնություններով հանդես չի գալիս
		3/բավարար/	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է սահմանափակ համագործակցություն, ծնողական համայնքն ուսումնադաստիարակչական

			գործընթացում ներգրավվածությամբ աչքի չի ընկնում
		2/վատ/	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ համագործակցությունը ֆորմալ բնույթ է կրում, ծնողական համայնքն ուսումնադաստիարակչական գործընթացում չունի բավարար ներգրավվածություն
		1/անբավարար/	բացակայում է դպրոցի կապը ՏԻՄ-ի, ծնողական համայքնի, գործընկերների հետ

7.ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացմանը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Փոփոխություններին ուղղված ցանկացած գործողություններ (միջոցառումներ) կապված են ռիսկերի հետ: Ռիսկերի ոչ ճշգրիտ կանխատեսումը կարող է հանգեցնել դպրոցի զարգացման առանձին ոլորտներում պլանավորված աշխատանքների թերացմանը եւ Զարգացման ծրագրի՝ այդ ուղղությամբ նպատակադրված խնդիրների եւ գործողությունների իրականացման արդյունավետության անկմանը:

ԴԶԾ-ում հնարավոր ռիսկերի պլանավորումը դպրոցի զարգացման գործընթացների արդյունավետության ապահովման համար խիստ կարեւոր է: Առանց ռիսկերի կանխատեսման Զարգացման ծրագրի իրականացման առանձին փուլերում եւ ուղղություններում ձախողվում է ակնկալվող գործողությունների կատարողականը, սահմանված վերջնարդյունքները չեն ապահովվում:

Զարգացման ծրագրի մշակման գործընթացում ռիսկերը հնարավոր է պլանավորել դպրոցի գործունեության որեւէ ոլորտի համար նպատակներ ու խնդիրներ սահմանելու փուլում, քանի որ այդ ժամանակ հեռապատկերում ընդհանուր գծերով ուրվագծվում են սահմանված նպատակի եւ դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր խոչընդոտները եւ ձախողումները: Միաժամանակ, Ծրագրի հնարավոր ռիսկերը առավել տեսանելի են դառնում ծրագրի գործողությունների մշակման, դրանց իրականացման ժամանակացույցի եւ պատասխանատուների պլանավորման փուլերում:

*ԴԶԾ-ի նպատակադրումների իրագործումը **խոչընդոտող ռիսկերը** բազմաբովանդակ են եւ դրանք, ըստ ազդեցության ուղղությունների, կարելի է խմբավորել հետեւյալ կերպ.*

- ✓ Կառավարման եւ խորհրդակցական մարմինների գործունեության թերացումներ եւ հնարավոր բացասական ազդեցություններ:
- ✓ Կադրային ապահովման, համակազմի մասնագիտական պատրաստ-վածության բացեր:
- ✓ Նյութատեխնիկական բազայի սահմանափակ հնարավորություններ:
- ✓ Ուսումնական անհրաժեշտ միջավայրի ձեւավորման դժվարություններ:
- ✓ Նորամուծությունների ներդրման, նորարարությունների եւ բարեփո-խումների համաչափ ինտեգրման խնդիրներ:
- ✓ Ֆորս մաժորային իրավիճակներում (բնական եւ տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ, պատերազմներ եւ այլն) անհրաժեշտ գործունեության ապահովման խնդիրներ:

Ըստ կանխատեսման հնարավորության, ռիսկերը կարելի է տարբերակել այսպես.

- ✓ ***Կանխատեսելի ռիսկերը*** հիմնականում կապված են գործընթացի առանձին փուլերի հետ. նրանց կանխատեսելիությունը լինում է հարաբերական բնույթի:
- ✓ ***Չկանխատեսվող ռիսկերը*** այն ռիսկերն են, որոնք ընդհանրապես անկանխատեսելի են, օրինակ՝ ֆորս մաժորային իրավիճակները:

ԴԶԾ-ում ռիսկերը նպատակահարմար է պլանավորել դպրոցի գործունեության որևէ ոլորտի համար նպատակներ ու խնդիրներ սահմանելիս: Դրանք պլանավորելուց հետո պետք է պլանավորել «ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները»: Վերջիններս մարդկային և նյութական ռեսուրսների ուղղորդման և հավաքագրման գործողություններն են, որոնք պետք է չեզոքացնեն սահմանված նպատակներին հասնելու հնարավոր խոչընդոտները:

8.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են որոշակի միջոցներ: Յուրաքանչյուր գործողության իրականացման և արդյունքների ապահովման համար պետք է կոնկրետ նշել պահանջվող միջոցները և նյութատեխնիկական պարագաները: Կարևոր է նշել, որ, հաստատությունում առկա է անհրաժեշտ ուսումնամեթոդական միջոցների և նյութատեխնիկական պարագաների համալրման կարիք, ինչի արդյունքում կապահովվի դպրոցի զարգացման ծրագրի արդյունավետ իրականացումը: Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է ուսումնական հաստատության աշխատակազմի, ծնողների և աշակերտական համակազմի հետ սերտ համագործակցային աշխատանքի ձևավորում: Այդ շրջանակներում նախատեսված կարիքները պետք է նախապես մշակվեն և պլանավորվեն: Ուսումնական պլանին համապատասխան կրթական ծրագրերի իրականացման, կրթական գործընթացի կազմակերպման համար պետք է միջոցներ և նպաստավոր պայմաններ ստեղծել, որպեսզի ունենանք ցանկալի վերջնարդյունք:

Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոցի զարգացումն ապահովելու, սահմանված նպատակներին հասնելու և ընդհանուր ուսումնական բարենպաստ միջավայր ստեղծելու համար առկա են հետևյալ խնդիրները.

- *Ընթերցասրահի ստեղծում, ուսումնամեթոդական և գեղարվեստական գրականության պաշարի համալրում,*
- *Համակարգչային կաբինետի ստեղծում, ՏՀՏ նորագույն համակարգչային սարքավորումների ձեռքբերում,*
- *Առարկայական կաբինետների ձևավորում, անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերով ապահովում*
- *Բնագիտական լաբորատորիայի ստեղծում*
- *ԿԱՊԿՈՒ սովորողների համար ֆիզիկական միջավայրի ձևավորում և անհատական հարմարեցումների ապահովում*
- *դասասենյակների վերանորոգում և անհրաժեշտ գույքով կահավորում*

- *հրաձգարանի վերանորոգում, կահավորում*
- *դպրոցական մարզադաշտի բարեկարգում։*

9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից՝ ամեն կիսամյակի վերջում, տարվա ընթացքում առնվազն երկու անգամ: Ծրագրի յուրաքանչյուր գործողության համար պետք է մշակել վերահսկողության մեխանիզմներ, հաշվետվության ձևեր, ժամանակացույց և լ դրանք ներկայացնել խորհրդի հաստատմանը:

Պետք է յուրաքանչյուր տարի Խորհրդին ներկայացնել Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, որը կներառի ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման վերաբերյալ չափելի տեղեկատվություն: Խորհրդին ներկայացվում է նաև տարեկան աշխատանքային պլանի ընտրված ժամանակահատվածի համար ***հաշվետվություն***, որը ներառում է.

- ✓ *Նախապես նշված խնդիրների կատարմանն ուղղված գործողությունների իրականացման արդյունքները և դրանց հիմնավորումները*
- ✓ *գործողությունների չկատարված կամ թերի կատարված լինելու պատճառները*
- ✓ *սահմանված նպատակների և խնդիրների իրականացման գնահատումը*
- ✓ *առաջարկություններ զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ*

Դպրոցի զարգացման ծրագիրը դպրոցի առաջիկա 5 տարիների հեռանկարային զարգացման ծրագիր է, և ինչքան էլ այնտեղ պլանավորված նպատակները, խնդիրները և գործողությունները հստակ ներկայացված լինեն, ժամանակի ընթացքում, տարբեր գործոններով պայմանավորված, կարող են ենթարկվել փոփոխությունների : Դպրոցի խորհրդի կողմից ԴԶԾ-ի իրականացման վերահսկողությունը նպատակ ունի խորհրդատվական աջակցությամբ, առկա ռեսուրսների ճիշտ ուղղորդմամբ և այլ աշխատանքներով օգնել տնօրենին ԴԶԾ-ի իրականացման բոլոր փուլերում:

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի ***վերհսկողությունն*** իրականացվում է հետևյալ դրույթներով.

- ➢ *Դպրոցի խորհրդի և տնօրենի համագործակցության ապահովում*
- ➢ *Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրում*
- ➢ *Դպրոցի խորհրդի կողմից տարեկան առնվազն 2 անգամ դպրոցի տվյալ*

ուստարվա համար ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման քննարկում ու համապատասխան գնահատականների ամրագրում

- *Համայնքի և դպրոցի այլ շահառուների շարունակական ներգրավում դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին և այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին*
- *Յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների*

Այսպիսով՝ վերահսկողության հիմնական մեխանիզմը զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունն է, որը ներառում է համապարփակ տեղեկատվություն յուրաքանչյուր գործողության իրականացման ուղղության կատարված աշխատանքների, զարգացումների, ինչպես նաեւ գործողության չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառների վերաբերյալ: Տարեկան հաշվետվությունը ներառում է զարգացման ծրագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվություն: Առանձին միջոցառումների սպեցիֆիկությամբ պայմանավորված՝
նախատեսվելեն վերահսկողության այլ մեխանիզմներ:

Չնայած Զարգացման ծրագրում նշված է նպատակների և խնդիրների իրականացման ենթադրյալ ժամանակացույցը, սակայն դրանք կարող են փոփոխվել մի շարք արտաքին և ներքին գործոններից: Այդ ամենից ելնելով՝ Զարգացման ծրագրի կատարողականի ամենաարդյունավետ տարբերակը տարեկան հաշվետվության մշակումն է, որի ձևաչափը ներկայացված է ստորև.

*Հաշվետվությունը պետք է ներառի յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ, որոնք պետք է կցվեն հաշվետվության ձևաչափին:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ №

№	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ